

ԳարՍու

# ԴԵՂԻՆ ՄԱՐԴԸ

Կինոպոեմ՝  
արձակի համադրմամբ

ԵՐԵՎԱՆ  
հեղինակային հրատարակություն

2010

ՀՏԴ 891.981- 8 ԳարՍու  
ԳՄԴ 84Հ  
Գ 363

Գ 363 ԳարՍու (Գարիկ Գագիկի Հովհաննիսյան)  
ԴԵՂԻՆ ՄԱՐԴԸ: Կինոպոեմ՝  
արձակի համադրմամբ/  
ԳարՍու .- Եր.:  
Հեղինակային հրատարակություն, 2010.- 60 էջ:

ՀՏԴ 891. 981-8 ԳարՍու  
ԳՄԴ 84Հ

© ԳարՍու (Գարիկ Գագիկի Հովհաննիսյան)

ISBN 978-9939-53-921-8

## Տեսանկյան փոփոխությունից տեսողությունը չի փոխվում:

*Կենսաբանություն*

Շունչս կտրվում էր:

Պատուհանները բացելու փոխարեն՝ դուրս մտա փողոց:

Փողոցում ամեն ինչ հասկանալի էր:

Փողոցում պատուհաններ չկան:

Փողոցի պատուհանները բացվում են ներս՝ փողոց:

Ու լավ էր՝ պատուհանները չբացեցի, թե չէ, շնչահատը

կլցվեր փողոց ու շունչ քաշելու տեղ չէր լինի կանգառում:

Կանգառում ինձ մոտեցավ մի մարդ:

Մի մարդը հասկացավ, որ բերրի պարտքեր ունեմ:

Մի մարդն առաջարկեց:

Մի մարդն առաջարկեց ծնել մի ֆիլմ:

Մի ֆիլմը պիտի դուր գար Մի մարդուն:

- Եթե ծնածդ ինձ դուր եկավ, կհարստանաս:

- Եթե ծնածս քեզ դուր գա, կաղքատանամ:

- Դու ես որոշողը:

- Ես որոշել եմ:

# ԱԶ ԿՈՂՄԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Լյարդն օրգանիզմի ամենամեծ գեղձն է:

*Կենսաբանություն*

**ԴԵՂԻՆ ՄԱՐԴ** - Ամեն ինչ ավարտվեց նրանով, որ ես հասկացա. ինձնից գողանում եք այն, ինչ ձերը չի:  
Անհմաստ կողոպուտ. ա՛յ մարդու քուռակներ, գոնե իմը գողացեք, որ արժեք ունենա է՞:

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - Դրանից է՞ր շունչս կտրվում:

Արագ քայլելն էլ չի օգնում. լյարդս ծակեց թուլակողս:

Լյարդը գտում է աղի արյունը թույնից, սարքում

ճարպաճար լեղի ու կաթեցնում տասներկուամտնյա

աղի:

**ԴԵՂԻՆ ՄԱՐԴ** - Մեր ու մնացած բոլոր մոլորակներին շատ անհրաժեշտ է լեղի: Լեղու տասներկուամսյա հալոցքը պետք է կառավարությանը՝ մարզված ու ճկուն մկաններով կառավարելու համար, պետք է օրենսդիրներին՝ օրենքները ձենձից ազատելու համար: Լյարդը շաքար է պահեստում:

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - Պատվիրատուն նման էր լյարդի:

Աչքերն էին աշխարհի ցավով կանաչ, ալկոհոլի հոտը,

հաստավիզ թիկնապահի պես, պտտվում էր շուրջը:

Լյարդ էր, մեծացած լյարդ, ցիրոզի թեկնածու լյարդ,

տժվժիկ լինելու բախտից զրկված մսիկ, որն ուզում է

լավ գործ մանկաբարձել: Բայց ո՞րն է լավ ու լավը ծնելը:

**ԴԵՂԻՆ ՄԱՐԴ** - Բանաստեղծության ցավոտ

անկեղծությունից կարող է շունչդ կտրվել: Գրելը

հազվադեպն է. քանի՞ անգամ եք տեսել, որ հազիվհազ

քայլող երեխան մենակով հաղթի փողոցի լայնքին... Սա

*է գրելը. անկեղծ դալտոնիզմ լուսակիրների նկատմամբ:  
Թե չէ՝ ցանկացածն էլ հանգիստ կանցնի գետնանցումով:*

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - Մի ժամանակ պոեզիան  
պատկերացնում էի շատ հստակ, տեղային մի բան:  
Մի ուրիշ ժամանակ հանդիպեցի պոեզիայի՝  
արտահայտված բառերով, գույներով, ձայներով,  
գծերով, կադրերով, քարե սիրախաղով, որ, չգիտես  
ինչու, քանդակագործություն է կոչվում, մարմնի  
կատարողականությամբ, որ, չգիտես ինչու, ինչ իմանամ՝  
ինչ է կոչվում... և այլններով:  
Սա շարունակվում է այնքան, մինչև կհանդիպես  
պոեզիային՝ արտահայտված կյանքով:  
Այստեղ սկսվում ու շարունակվում է պոեզիան:  
Պոեզիան չի ավարտվում...

**ԴԵՂԻՆ ՄԱՐԴ** - *Ամենաանհրաժեշտ պոեզիան Երկիրդ է,  
ուր ապրում = չես նախանձում ու խանգարում  
մեռնողներին...*

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - Լավ, ենթադրենք՝ պոեզիան չի  
ավարտվում, ու կյարդն ուտել է ուզում: Նրան ուտելիք  
տալու և հոգու լյարդն անգործ չթողնելու համար ինձ էլ է  
ապրել պետք, իսկ... ապրելու համար կենսափորձ է  
պետք, փորձը գնվում է ապրելու գնով...  
Հիմա ի՞նչ անեն:

**ԴԵՂԻՆ ՄԱՐԴ** - *Ահավոր է, երբ շարունակում ես լռել:*

*Քո լռությունից մահը հոշոտվում է:*

*Քո լռության մեջ կյանքը հողոտվում է:*

*Ահավոր է, երբ այս լռությունից անցնում ես խոսքի...*

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - Այգուս մայր առուն առաջ հողից էր.

Ջուրը հոսում էր մտածելով, խոհով:

Ագուցվում էին անցյալը, ապագան մեջս,

Երբ արտատպվում էր աչքերումս առուն:  
Հիմա... մետաղյա կիսախողովակ է.  
Անցնում է ջուրը՝ ձայնագուրկ, սլացիկ սլաքով:  
Անցնում է ջուրը՝ անցյալը մարսած, անցյալից պոկված,  
անցյալը...  
Չշարունակելով...  
Հ.Գ.  
Հիմա՞ ինչ անեմ.  
Իմ կարեցածից՝ առայժմ սա:  
Հիմա ի՞նչ անեմ.  
Իմ կարեկցանքից՝ առ այժմ սա,  
իմ արած ցանքից դժգոհ մի գնա,  
իմ գրած ցանկից ի՞նչ կկամենա  
Ձեր այլանդակված լյարդե ստամոքսը = փչացրած  
բառաժապավեն = Հիմա՝ ի՞նչ, անե՞մ...

**ԴԵՂԻՆ ՄԱՐԴ - Արագ մի՛ քայլիր.**

*փնտրածդ այնտեղ չէ, ուր գնում ես:*

*Այն տեղն այնտեղ չէ, ուր կհասնես,*

*թե շարունակես քայլել արագ...*

*Արագ մի՛ քայլիր.*

*ուն կորցրել ես, այնտեղ չէ հաստատ, ուր գնում ես...*

*քո կորցրածը մնաց իր տեղում, մնաց ձեր տեղում...*

*ու դու կկորցնես ձեր տեղը նաև, թե շարունակես քայլել  
արագ...*

*Ախ, մի հարցնող չկա՝ ինչի՞ց ես ուշանում:*

*Հարցնող չկա, բայց դու պատասխանիր.*

*ինչի՞ց ես ուշանում...*

*Հոգնած մեռնում եմ:*

*Ու՞ր ես:*

*Քանի վայրկյան է՝ քեզ եմ ման գալիս:*

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - Ախր... այգացավն ու այգաբացը ինձ  
շատ են հարազատ, հասկանում ե՞ք: Այգաբացն այգում  
նույնն է, որ քեզ ու սիրելիիդ արթնացնի ձեր մանչուկը՝  
օրորոցից՝ անվնաս-վթարային վայրեջք կատարելով ձեր  
անկողին: Այգում այգաբաց շատ են խմել՝ մնում է  
մանչուկը, ու կյանքը նորից ճիշտ ոտքերին կհագնի  
ճիշտ կոշիկներ: Սիրտս մի տեսակ է՝ նեղացած երեխայի  
պես, որի հայրն արգելում է համացանցի պոռնո նայել ու  
հասկանալ, թե ինչու են լյարդերն իրենց շաքարն ու լեղին  
խառնում իրար: Մի տեսակ է սիրտս. քիչ առաջ  
պատվիրատուն զանգեց. «Ո՞նց են ծնվում  
ծննդաբերական ցավերը»: Տո ասա՝ քո ինչ գործ է՞՞ ոնց  
են ծնվում, դու՞ ով ես, որ մի հատ էլ... Վերջին  
վերոգրյալը չասելուց առաջ հիշեցի, որ պատվիրատուն  
փող էր տվել, հեռախոս էի գնել, հեռախոսահամարն էլ  
տվել էի իրեն... Բայց մի բան չեմ հասկանում. ինչի՞ս էր  
պետք հեռախոս: Ես հո գառ չե՞մ, որ մի հատ էլ պահակ  
շուն կապեցի կողքիցս...

**ԴԵՂԻՆ ՄԱՐԴ - ԳԱՌՆՈՒԿԻ ԶԱՆՉԵՐԸ**

*Ձմեռվա աչքի մեջ թախծի պես խրված է ծառը:  
Մեռած ճյուղերի արանքում այս թախծի՝  
Եռաց մի թռչնի թայրտոց.  
Մի թռչուն, որ թաթախվել է թախծի մեջ,  
Ինչպես երեխան՝ մյուռոնի:  
Հորինեց այս երեխան իր թևածումը,  
Որը խանգարվում էր անընդհատ՝  
Գարնան վերհուշից տառապող ճյուղերի բողբոջներով:  
Երեխան կնքվեց՝ ժողովուրդ:  
Ժողովուրդը տարբերվեց իր ազգանունից:  
Տնօրինեց ձմեռը ծառին,*

Ծառը՝ ճյուղերին, ճյուղերը՝ ժողովրդին:  
Ու հիշում եք, չէ՞,  
վերջինս, քանի որ նման չէր իր ազգանունին,  
Դառավ մատաղացու գառան հոտ:  
Գառնուկը խոյ դառավ ու վճռեց:  
Վճիռը ճանկ դառավ ու այրկվեց:  
Պրկում - բողոքը թռավ-բարձրացավ  
ու խրվեց ձմեռվա աչքի մեջ:  
Բայց անտերացած Երկրի տիրակալը  
Ձմեռվա կեսին արևային ակնոցով էր:  
Եվ բողոքի ճանկը դիպավ սրան ու...  
ինչպես ճանճը՝ անհաղթ ապակուց:  
Եվ բռնեց Նախագահը թռչնին  
Ու իր դյուժինաչափ ոհմակով  
Նստեց խորհրդատու ընթրիքի:

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - ... թե հեռախոսն ինչու չչալրտեցի, սա  
էլ չեմ հասկանում: Լավ, հիմա կչալրտեմ.  
շը~պը~~~~րտ... շը~պը~~~~րծ: Շատ լավ արեցի:  
Ի՞նչ տարբերություն. չորս կողմը թափրտված խոսքեր  
են: Որ մուրացկանի քթի տակ կռանում ես՝ մեծարես, աջ  
ու ձախ նախընտրական խոստումներ են լցված: Սրանք  
տեսնում ես ու ստիպված՝ համարժեք մի բան էլ դու ես  
զցում, ու մեծարման, մեծ արարման ծեսը վաղաժամ  
վիժում է դառնում: Արդյունքում՝ օգտվում-ուրախանում է  
մուրացկանը՝ ավելացած մանրադրամից:

**ԴԵՂԻՆ ՄԱՐԴ** - Եթե աղբի վերամշակման գործարանից  
այիտանի ապրանք է արտադրվում, ապա խոստումների  
վերամշակումից ստացվում է հայիոյանք:

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - Ի՞նչ:

ԴԵՂԻՆ ՄԱՐԴ - Ասում եմ՝ պորտալարիդ մնացորդի  
չորանալուն զուգահեռ ծաղկում են գեներիդ բողբոջները:

ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ - Լսե՛ք, ես **ԳԵՆ** չունեմ... ու... ի՞նչ  
գործ ունեք իմ ֆիլմում, ես ձեզ կանչել ե՞մ:

ԴԵՂԻՆ ՄԱՐԴ - *Իսկ քե՞զ ով էր կանչել, որ լաց ու կոծով  
եկար ընկար...*

ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ - Ու՞ր եկա ընկա:

ԴԵՂԻՆ ՄԱՐԴ - *Մորդ կոնքից՝ զուգարանակոնք:*

ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ - Հըըըըըըըըըըըըը... Լույս  
աշխարհը, իմ աշխարհը, իմ մոլորակը զուգարանակո՞նք  
եք դարձնում:

ԴԵՂԻՆ ՄԱՐԴ - *Ախմա՛խ, ես չեմ դարձնում:*

*Դարձնողների պատճառով ես հիմա պատվերով ֆիլմ  
ործկում:*

ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ - Դա արդեն Ձեր գործը չի:

ԴԵՂԻՆ ՄԱՐԴ - *Հա, ճիշտ ես. պատվեր կատարելն իմ  
գործը չի: Իմ գործը քոպեսներին օգնելն է:*

ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ - Ու ինչո՞վ եք օգնում քոպեսներին:

ԴԵՂԻՆ ՄԱՐԴ - *Ուսերով... Որ խիղճը լյարդ  
չդարձնելով՝ լյարդի պատվերը դարձնեն խղճինը, նոր  
կատարեն:*

ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ - Այսինքն, մեր դժոխքը քիչ է, մի հատ  
էլ մասնաճյուղ եք բացում: Շատ շնորհակալ եմ, ինձ  
պետք չի Ձեր օգնությունը:

ԴԵՂԻՆ ՄԱՐԴ - *Հա՞... Հաստա՞տ:*

ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ - Հա... Հաստ...

ԴԵՂԻՆ ՄԱՐԴ - *Լավ, դու ես որոշողը:*

ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ - Ես արդեն որոշել եմ:

Ստոպ, նկարահանումն ավարտված է:

ԴԵՂԻՆ ՄԱՐԴ - *Բայց հարցիս պատասխանի, նոր իջի ուսերիցս. «Քեզ ո՞վ է կանչել, որ եկել ես»:*

ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ - *Դե... Չգիտեմ... Ոչ ոք:*

ԴԵՂԻՆ ՄԱՐԴ - *Բա ինչու՞ ես եկել:*

ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ - *Հենց էնպես:*

ԴԵՂԻՆ ՄԱՐԴ - *Հենց էնպես եկողը հենց էնպես էլ կգնա:*

ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ - *Ոնց... Չհասկացա...*

ԴԵՂԻՆ ՄԱՐԴ - *Բարդ բան ե՞մ ասում. ծննդատնից գրկած տանում են տուն, մի քիչ հետո տնից գրկած կամ ուսերին դրած տանում են... չափսերդ են փոխված լինում. մի քանի թիզ ու կգ, բայց դա էլ ոչ մի նշանակություն չի ունենում... Իջի՛:*

ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ - *Չէ... մի թոպե...*

ԴԵՂԻՆ ՄԱՐԴ - *Իջի՛: Ես ոչ քո արյան շրջանառության ծավալն ունեմ, ոչ էլ տևողությունը: Գիտե՞ս՝ քո պես քանի այսմայի կա, որ տեսախցիկի հենարան չունի: Պիտի գնամ հասնեմ դրանց էլ: Իջի՛, այ տղա... Լյարդ-դամե-ծար... Հը՛... չես էլ ամաչում:*

ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ - *Լավ էլի, չէ... մի... Ա~խ...*

## ՎԵՐԵՎԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Քիթն օրգանիզմի ամենամեծ գեղծը չէ:

Կենսաբանություն...

Երիկամներն արյան ծավալից ներծծում են մեզն  
ու արտածորեցնում հանրային զուգարան:

Սոցիոլոգիա

... Հետո՞ ինչ...

Քիթս ուժեղ խփվեց քանդորտված մայթին:

...որ հիման...

Արնակաթկթիցս՝ ավելի ուշադիր են անցորդները:

...անցյալը չէ:

Ոնց որ գիժ լիներ: Չթողեց բացատրեմ՝ ինչու էի ինձ  
արգելել իջնելը: Ես, ախր, բարձրությունից վախենում եմ  
է՞, իսկ էդ գժվածը կանգնել էր կանգառի 1000 000 000  
001-րդ հարկում, որտեղից պիտի նկարեի հաջորդ  
կադրը՝ ասում էր. «Հետո՞ ինչ, որ հիման անցյալը չէ»: Ու  
հիմա՝ խնդրեմ. սա է գժերի ասածը չանելու քթակիթը:  
Իսկ կառավարությունը քաջ է, որ մինչև հիմա ժողովրդի  
ասածը չի անում: Կառավարությունը բարձրությունից չի  
վախենում, ժողովուրդը իրեն միայն գժի տեղ է դրել, բայց  
իրականում ոչխարի պես հեզ ու համեստ ու խելոք ու...  
չէ, խելացի չէ, խելացի լիներ՝ կառավարությանը գոնե  
ուսերին կնստեցներ, ոչ թե գլխին... Լավ է, ես հո  
քաղաքական մեկնաբան չեմ: Շատ ինձ պետք է, ով է  
գիժ, ով է քաջ, ով է շփոթում կոնքի ու պարանոցի  
գլուխները՝ ձիգ կամ թույլ, այս պահին ոչ մի էական  
տարբերություն... (ինձ համար՝ ոչ մի տարբերություն. ես

ոչ ժողովուրդ եմ, ոչ էլ կառավարություն... բայց, խոսքը մեր մեջ, լավ էլ ջրիկ եմ, չէ՞): Ու հիմա, իմպոտենտանալու վախից ավելի նվազած 1000 000 000 000 մարդ (ինձ չհաշված, բնականաբար), ինձ դարձրել է ավելորդ ուշադրության նշագունդ: Ասա՝ ուշադրություն ունեք, ձեր վրա դրեք, ա՛յ տնաքանդիկներ, հե՞տս ինչ գործ ունեք...

Փոքրուց եմ զգվել ավելորդ ուշադրությունից. նստում էի հաց ուտելու՝ մայրս սկսում էր ուտելեղենը հնարավորինս մոտեցնել ինձ.

- Ա՛յ իմ մա, ես կվերցնեմ էլի...

- Չէ, դու հանգիստ հացդ կեր: Ես կտամ:

- Ու~ֆ, դե՛...

- Էլ մի՛...

Ու փոքրուց, ուշադրության ավելցուկից, ձեռքերս մնացին կարճ, ինչքան պետք է՝ մինչև բերան: Դրա համար հիմա ստիպված եմ պատվերով... Լա՛վ, ցավաթաթախ լինելով՝ բան չի փոխվի, ոչ էլ քթակիթս կկտրվի: Մոռացա ասել, որ քիթս էլ, որպես կանոն, հայրս էր սրբում... ա~յ քեզ հա~յր: Ա՛յ մարդ, դու ուրիշ զբաղմունք չունե՞ս:

- Ունեմ, տղա ջան, բայց քո շնչառության ազատության համար ես միշտ ժամանակ գտնում եմ, մի՛ անհանգստացի:

- Ա՛յ իմ պա, թող ես գտնեմ էլի, էդ ժամանակը:

- Չէ՛, քանի ես ողջ-առողջ եմ՝ դու պիտի միայն հանգիստ կարդաս, գրես, սովորես, որ մարդ դառնաս...

- (միլիոն տարվա հեքիաթ, որ չգիտես ինչու, միշտ նոր է հորինվում) Պա՛, լավ էլի...

- Վե՛րջ: էլ չենք խոսում: Ես կմեռնեմ՝ նոր ինչ կուզես՝ արա, - եզրափակում էր հայրս իր քթասրբիկ արարողությունը, թաշկինակը ծալում-դնում գրպանը (իր թաշկինակն ու իր գրպանը. սա ավելի կատաղեցնող էր. գոնե իմ թաշկինակով մաքրեր տնաշինարարը...), գնում իր գործին՝ թողնելով ինձ իմ հանգստության, կարդալու, գրելու, մարդ դառնալու ու քթի հետ:

Ա~յ քեզ քի~թ: Ա~յ քեզ կի~թ:

Արդեն պարզ է, չէ՞, որ ձեռքերս մինչև քիթս էլ չեն հասնում: Հիմա հորս որոշած՝ «ինչ կուզես՝ արա»ի ժամանակն է, բայց չեմ կարողանում անել ուզածս՝ վերոպատմյալի պատաճառահետևանքով:

Բա որ տուն-տունիկ խաղալուց էին գալիս նայում, որ կինս չժեծի ինձ... Դրանից ահավորն էլ սա էր:

Հատուկ իմ համար ֆուտբոլի գնդակ էին սարքել... չեք հավատա. բամբակ-կից... պատկերացնում ե՞ք: Ու սառնարանում էլ պահում էին, որ... չգիտեմ՝ ինչու էին սառնարանում պահում, բայց դա անելու բան չէր, որ անում էին... Մի խոսքով. մի հայտնի թիմից էլ դարպասապահ էին վարձել: Միակ խաղընկերս էր: Բոլոր խփածոներս գոլ էր: Թեք էլ խփեի, անսկզբունքային **ԽՆՈՒՆՋԻ** պես գնում-բերում՝ գոլ էր մտցնում: Դե, ի՞նչ մեղք ունեի. դրա համար էլ վարձել էին խեղճին: Բայց ամենածիծաղելին գիտե՞ք որն էր: Մի անգամ նրան համոզեցի, որ, վերջապես, հյուրասենյակից դուրս գանք, ու գոնե, փոփոխության համար, բաղնիքում խաղանք (մեր բաղնիքը մետրոյի կայարանի չափ էր): Ամենահարմար դարպասը, բնականաբար, վաննան էր: Ու, քանի որ ես հանձարեղ հարձակվող էի ու հազարամյակի ռմբարկուն, խաղավարտից հետո

գնդակս ոտից գլուխ ջուր էր: Հաջորդ խաղին խաղընկերս գնդակը հանեց սառնարանից, բերեց, որ սկսենք խաղը: Առաջին իսկ հարվածից այնպես ճչացի, որ խոհանոցի դանակները վախից դառան պատառաքաղ, պատառաքաղներն էլ՝ գդալ: Մի քանի շաբաթ վերակենդանացման բաժանմունքում պառկելուց հետո ուշքի եկա (վերամարդացման բաժինը փակվել էր ֆինանսարդձգնաժամի պատճառով): Ուշքիցս մի քանի ժամ առաջ՝ հայրս էր եկել.

- Խաղընկերոջդ դատի տվեցի՝ թաց գնդակը սառցարանում պահելու ու այնուհետև, դրանով անչափահասի հետ խաղալու մեղադրանքով: Բայց մեր ժողովրդավար երկրում նման հանցանքը պատժող օրենք չկա, ուստի, Օրինամիզ գոմի արտակարգ նիստ է գումարվել՝ նոր օրենք ընդունելու համար, որ անպաշտպան, անազգ խաղընկերոջդ չարդարացնենք:

Այստեղից, այժմ ու այս պատճառով սկսվեցին մեր Երկրում անհեթեթ, անիմաստ ու ամոթալի օրենքներ արտադրվել ու մզվել:

Հայրս ստեղծեց սխալ դաստիարակությամբ անափտան սերունդ արտադրելու տեսությունը:

Իսկ ես հիվանդանոցից արտահանվեցի ու մնացի կաղ, որի պատճառով էլ չծառայեցի Հայրենիքիս: Ու տեղից էլ մի բան չէի, ավելի կիսատ մարդ մնացի:

\*\*\*

Շունչս կտրվում է:

Պատուհանն ու փողոցը կապ չունեն:

Արյունը, որ քթածակերում չորանում - մնում է, սկսում ես ատել մարդկությանը ու ամենաերազելիդ դառնում է՝

ստիպել բնությանը ինքնասպանվել. սա, իհարկե, իմ պես անապագա, անողնաշար կամակատարի համար: Իսկ դու ինքնուրույն ես հաց կերել ու քիթդ սրբել, ֆուտբոլ չես խաղացել բամբակե գնդակով, չէ՞: Դու նման դեպքում կժպտաս ու խոփը կներշնչես օդը, մի թեթև կփռչտաս ու վերջ: Տեսա՞ր չորացած արմատով ու պնդածունկ - ամրակրունկ, ռեժիսորների տարբերությունը:

Լավ, սկսեմ նկարա... Կա՞յ քեզ պատմավեպ, ա՞յ քեզ սեղմավեպ, այ քեզ բա՞ն... Տեսախցիկս... տարավ էն գժարանի վետերանը: Ու բոլոր բեղմնավորած կադրերն էլ հետը... Թու՞ք ու մուր... հիմա լյարդեղենը որ եկավ ու անտարբերությունն աչքերում լերդացրած՝ հարցրեց.

- Դե՞, ո՞նց են գործերը: Ու՞ր հասավ ցմփորիկը: Տեսնե՛մ... (իր արևին, իբր հուճոր էր էլի):

- Բայց, գիտե՞ք...

- Ես դեռ ոչինչ չգիտեմ: Տեսնեմ՝ նոր:

Ես ինչքա՞ն կմկմամ ու խելոք շան պես թաթով ականջս քորեմ: Հը՞, ինչ անեմ... Հա՛, լրիվ մոռացել էի. հեռախոսո՞վ: Ի դեպ, մի քանի դար առաջ, հեռու մի տեղ անցկացվում էր «Կես կադր, կես վայրկյան» կինոփառատոն - ծննդատունը, որտեղ հիմնադրվեց հեռախոսային ֆիլմերի հեշտածնությունը: Հորս պապը, կարծեմ, այդ փառատոնին մասնակցել է: Ու, ասում են, դե հիմա լեգենդ է, թե ինչ՝ չգիտեմ, բայց ասում են, որ այդ փառատոնի հիմնադիրը հեռախոս չի ունեցել... Հետաքրքիր է, չէ՞. ոնց որ մարդ ատամ չունենա, բայց ատամի մածուկ արտադրի ու ... ձրի բաժանի մարդկանց: Միայն Գիժ լինելով՝ նվիրյալ չես դառնա. մարդ, առնվազն, ուղեղի փոխարեն սիրտ պիտի ունենա,

որն անընդհատ սիրահարված է մարդկանց: Առանց սրա հնարավոր չի լինել անատամ, ակռամածի արտադրամաս բացել ու դառնալ բարեգործ: (Պատմության այս դասը կփոխանցեն որդուս. ես էջացած ուշացա): Փորձեմ հիշել այդ մարդու անունը... Գի Րէ: Հա~, հա', ինքն է որ կա...

Լավ, ժամանակ չկորցնեմ, սկսում եմք՝ մոտոր: Ի՞նչ եղավ: Պա~հո~. այ տղա, հեռախոսս ի՞նչ եղավ... վայ, լյարդի տղա, ժամկետանց պաշտետ դառնաս դու, հա~: Ի՞նչ փորձանքի մեջ գցեցիր ինձ... Հիմա ես ի՞նչ անեմ:

**ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ – Պատահաբաղով նկարեք, պարոն:**

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ -** Ի՞նչ:

**ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ –** *Էդ որ ասում էիք է՞, «մի քանի դար... հեռու մի տեղ... «Կես կադր, կես վայրկյան» կինոփառատոն...*

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ -** Հա, ի՞նչ:

**ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ –** *Էդ ժամանակ մի մարդ էլ կար, Հեքիմը: Գի Րէի ընկերն էր ու հոպարիս կնկա պապը:*

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ -** Հա, ի՞նչ անեմ, ի՞նչ ես ուզում ինձնից:

**ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ –** *Դու բան անող լինեիր՝ մինչև հիմա չէիր սպասի ինչ-որ մեկի... Մի խոսքով, Հեքիմն ասում էր. «Զուներս տեսախցիկ, նկարիչ պատահաբաղով»: Էն ժամանակ բոլորը ծիծաղում էին նրա ասածից, բայց նա, իր վերջին ֆիլմը ու աշխարհում առաջինը, նկարեց պատահաբաղով:*

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ -** Հա: Տեսել եմ.

«Կրքի մետամորֆոզներ. ինչպես դանակը դարձավ պատահաբաղ, պատահաբաղը՝ գդալ, գդալը՝ ատամնաքրիչ»:

**ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ** – *Հենց էդ: Դե, Ձեզ հաջողություն: Ես գնամ իմ գործին. քրստ, քրստ, խըրչտ, փրստ, ֆըշտ և այլն...*

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - Մի բռայե: Սպասի բան եմ հարցնում: Էստեղ, մի ժամանակ գրադարան կար, ինչ է՞ եղել:

**ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ** – *Ի՞նչը:*

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - Գրադարանը՝ ի՞նչը:

**ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ** – *Մտածեցի՝ նկատի ունեք՝ գրադարանի համակարգիչները:*

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - Չէ՛, համակարգիչները նկատի ունենայի՝ կասեի. «Էստեղ մի ժամանակ հզոր համակարգ կար, ի՞նչ եղավ»:

**ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ** – *Պայթեց:*

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - Ի՞նչը:

**ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ** – *Համակարգը: Գրադարանն էլ ընկավ ալիքի տակ ու փլվեց: Չնայած, կառավարությունն այդ մասին ապատեղեկատվություն տարածեց. «Նոր սերունդը գիրք կարդալու կարիք չունի: Քանդում ենք գրադարանը»: Բայց ժամանակի հետախուզումից պարզվեց, որ նոր սերունդը լավ էլ ունի կարդալու կարիք, ինչպես հասուն մարդիկ՝ կենակցումի...*

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - Ու՞:

**ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ** – *Էլ ի՞նչ «և»: Չհասունացած Նոր սերունդը սկսեց կենակցել...*

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - Ե՞վ...

**ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ** – *Էլ ի՞նչ «ու»: Կենակցեց իր անցյալի հետ, կենակցեց ամեն տեղ, ամեն պահի, ամեն ինչով... ու ստացվեց դեզնեդրատ ներկա: Լավ, ես գնամ իմ «քրստ, քրստ, խըրչտ, փրստ, ֆըշտ և այլնը» շարունակելու...*

*քըստ, քըստ, խըըշտ, փըստ, ֆըշտ և այլն...*

*Հա, լսի, սա վերցրու, գուցե օգնի՝ պարապությունից ներկայիդ հետ չկենակցես: Դու հասուն ես, բայց ներկադ է տհաս: Ապագադ էլ որ դեգեներատ եղավ...*

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - (Ես ապշած եմ: Երևի: Բայց...) Լսի՛, դու ո՞վ ես:

**ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ** – *ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ...* քըստ, քըստ, խըըշտ, փըստ, ֆըշտ: Քըստ, քըստ, խըըշտ, փըստ, ֆըշ...

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - (...բայց այս ինչ-որ մեկի տված թղթախուրձն ինձ խանգարում է՝ չծնված-մեռած երեխայի թացության պես): Նայելով **ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԻ** հստակ անկյունագծով պարող թիկունքին ու գլխի ալեխառն ամպի կողքից երևացող ցախավելի պոչին՝ հասկանում եմ, որ ինչ-որ բան չի կատարվել. այստեղ **ԲԱՆ** է կատարվել...

...արդեն վառված է գրկիս երեխայի մեծ մասը... թաղել... Բայց այս երկաթապակե ոսպնյակներով, ասֆալտբետոնե կույր գլխում հող կճարվի՞... Մի թոպե...

Էջ 15

## **ԱՅՍ**

Քաղաքը պատմություն գիտի:

Քաղաքը պատմել գիտի:

Քաղաքը չկա:

Պատմությունը քաղաքի մասին է:

Պատմությունը քաղաքինն է:

Պատմությունը չկա...

Քաղաքը պատմության մասին է:

Քաղաքը պատմություն է:

Քաղաքը... կար...  
Կարն անցյալ կատարյալ է:  
Կարը կատարյալ էր ու անցյալ:  
Կարը էլ չկա:  
Անցյալը պատմական քաղաքի մասին է:  
Անցյալը հերթական էր:  
Հերթականն էլի կա...

ԷՋ 2

## **Քո ներսում ապրող օրվա եղանակները**

Ձմեռվա չոր առավոտը սառն էր՝ քնած համակարգչի պես:

Գարունն ամառային շորերով եկավ իմանալու՝ աշունը ոնց է:

Ձմեռը խորունկ հոգոց հանեց, վառեց հանգած ծխախոտը, քայլեց. հյուրն էլ ետևից:

Արևը, մի բուռ խունկի պես, իր կապտագորշ մոխրամանում շարժվեց՝ հյուրի կրնկին նստած:

Հասան:

Գերեզմանոցում ցուրտը խարույկի փայտ էր հավաքում:

Ձմեռը կրակ չունի (ավելի ճիշտ՝ ներսից հանել չի կարող):

Գարունն էլ ծխող չի:

Ձմեռը իրեն ու իր համբույրը մոտեցրեց շիրմաքարին:

Բայց շրթաքայլը նրա՝ կաթվածահար եղավ, ինչպես ջուրն է թռնում շնչափող:

Աշունը կտրուկ հանեց ձեռքը քարի տակից ու բռնեց սրա կոկորդից:

Սա շփոթվեց, խառնվեց իրար, նայեց գարնան դեմքին, բայց գարունը, արցունքից գոլորշապատ աչքերով, չտեսավ նրա նայելը:

Կարմրեց դեմքը Ձմեռվա՝ արյան կենսաշարժի դադարից:

Պայթեց դեմքը նրա, երբ աշունը թուլացրեց մատները:

Ու ձյունը, ինքնամանրմամբ հարբած, հասավ տուն:

Ու գարունը հանգիստ սրտով մտավ Ձմեռվա արգանդը... ու սպասեց...

**ԴԵՂԻՆ ՄԱՐԴ** - Աշունն ու ձմեռը, երբ իրարից չեն տարբերվում, ուրեմն գարնանը մի ծաղկած ծիրանների է կտրվելու...

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - Ի՞նչ...

Էջ 58

... տներից բռնությամբ վճռվածների ոսկրերի հիմքով սկսեցին կառուցվել նիկելապատ շրջանակներով հայելի-ակնոցներ հագած շենքեր: Վճռվածները տեսնում էին ամեն օր իրենց այս ակնոցներում, բայց այդպես էլ չտեսան իրենց նորաշեն երկնահուպերում...

Տան կենսագրությունը փոխվեց:

Տունը դարձավ ոչ մի բան:

Մարդիկ սկսեցին պայքարել ոչ մի բանի համար:

Այսինքն, մարդիկ սկսեցին հասկանալ, որ պայքարել ու ապրել են ոչ մի բանի մեջ ու ոչ մի բանի համար:

Երթուղի ներխուժեց նոր բառ.

ԱՄՕԹ.

Ամենուր ԱՄՕԹ էր. փողոցում, փողոցի տակ, փողոցի կողքի փողոցում, այս փողոցին կողոսկրեր դարձած

տների դիմաց, տների մեջ ... տներ, որոնցից շուտով պիտի բռնությամբ վճռվեին ուրիշները՝ իրենց ոսկրերը թողնելով որպես ամրաններ՝ նորակառույցի համար...  
Եվ երբ, մի անսովոր օր, ամբոխը խտացավ ու դադարեց ամբոխ լինելուց, երբ հանրայթի ուժը սկսեց լռության մեջ անգամ դառնալ ֆիզիկապես զգալի...

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - Ափսոս, շարունակությունը չկա...  
Ի՞նչ արեց հանրայթը իր ուժը զգալուց հետո... շա՛տ ափսոս... Կարող եմ հորինել... Ասաասաասա, շատ լավ էլ ստացվեց. ֆիլմն հենց սրա մասին էլ կլինի: Թքած պատվիրատուի լյարդեղեն քթին: Հենց սա էլ կնկարեն ու... պատառաքաղով էլ կնկարեն: Ֆիլմը հենց այսպես էլ կկոչվի. ԱՄՕԹ: Հրաշալի վերնագիր: Բայց... ԱՄՕԹ-ն ի՞նչ է...Լավ, բացատրական բառարանը կգտնենք հետո: Հա, բացատրեն, թե ինչպես է նկարվում ֆիլմ՝ պատառաքաղով:

**ԴԵՂԻՆ ՄԱՐԴ** - Ծը, ծը, ծը, ծը, ծը...

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - Պատմական փոքրիկ անդրադարձ: Այ... լավ էլ մեծ թուղթ է: Սրան էլ կնստեն ու անդրադարձս կանեն: Բայց...

ԷՋ 948

## Աղ ու հաց

Ուզում եմ գնամ գյուղ՝ պապիենց:

Ըհը, գնացի...

Ը~ըհը՛, հասա.

- Բա՛րև, տատ:

- Կա՞յ, աստղծու բարին, բալա ջան...

Ուզում եմ...

Չէ՛, արդեն փաթաթված են տատիս ու ինձ զգում են երկու օրական հավի ճուտ:

- Տա՛տ, հաց ու պանիր են ուզում...

...Ատամներովս զինված Վայելքը՝ դանդաղ արժեվորելով կրծում է հորած պանրին անկողին դարձած լավաշե թունելը, որից սկսվում, որում ավարտվում է այդ պահի խաղաղապահ գումարտակ դառած գյուղի հոտը...

Քննություն հանձնող համակարգչիս պես պատասխանում են տատիս՝ քաղցրակաշի ընկույզների գորշ ողնաշարի նման հարցաշարին՝ իրար կպած, իրարից անկապ, բայց ամուր հիշողության թելին հավաքված հարցերի շարանին...

...Առաջին տիեզերքի ամենահոգատար թխսները կտցահարում է թթնու շվաքը՝ չմռռանալով հսկել անալի պանիր և պնդեփ ձու կտցող իր ճտերին:

Այս մի բռանոց արևներն ու մարդիկ նման են:

Այս մի բռանոց արևներն ու մարդիկ նման ե՞ն:

Բա եղա՞վ. մարդիկ, իրենց չծնված նմաններին ուտելուց բացի, ուտում են նաև ծնվածներին, չէ՞...

- Լավաշը թոնրում են թխել...

- Ի՞նչ, տա՛տ...

- Պանիրը կճուճի մեջ են հորել, կճուճը՝ թոնրից հանած մոխրում, բալա ջան...

- Տա՛տ ջան, ի՞նչ...

Ապուշի պես՝ չէի լսում իսկական ճշմարտությունը:

- Ասում են՝ էս մեկն էլ կեր, մինչև մաժուճը բերեն...

- Տատ...

- Ասում են՝ պապդ թոնիրն ու կճուճը նույն կավից շինեց:

Չէ՛, տատ, ուզում էիր ասել, որ լավաշի խմորը՝ քո ու պապի քրտինքով ես շաղախել, որ թոնրի կավը՝ քո ու պապի մարմնից է, ու չէ...

- Պինդ խոսա, մեռնեն ջանիդ, ծանր եմ լսում... Է~հ...

- Տատ ջան, ի՞նչ...

- Իսկական համից չեն կշտանում:

- Տա՛տ, բա պապին տանը չի՞:

- Ըհը՛, արի կե՛ր, սառը-սառը... Գնամ կովին խոտ քցեմ, կթեմ՝ գամ...

Ուրեմն, պապս տանը չի:

Ուրեմն, պապն ու դաշտը էլի հանդիպում ունեն, հերթական ծիսակարգն ունեն, հաջորդ հանդիպման հարցերն են քննում...

ու հանդիպել են պապն ու դաշտը

ու սրտերով դիպչել - միացել են պապն ու դաշտը

ու մոռացել են ժամանակի ծիծաղելի գոյությունը՝ պապն ու դաշտը...

...Հաց ու պանրի բուռումը բռունս կիսվել է, ինչպես ծխախոտի լրիվ չծխված գլանակ:

Ես զգացի, որ մոխրացրել եմ մի հրաշք կտոր իմ կյանքից:

Ես զգացի կաթի տաքության մեջ իմ մանկությունը:

Ես զգացի սեղանին դրված մածունի մեջ իմ այսօրը:

Ես լսում եմ կթվող կաթից ծնված ու տատի տաք գոգով գրկված դույլը լցվող մեղեդին... ու շարունակում ապրել - համակարգչիս մեջ պատասխաններ ավելացնել...

Ես կրծոտում եմ իմ համեստ ու անհամեմատելի մանկությունը, ես ինձ զգում եմ շուն, որ սիրախաղ է անում իրեն նետված ոսկորի հետ...

Պինդ ոսկորի ու լավաշի, ծուծքի ու պանրի նմանությունն ինձ մտածող ժպիտ նվիրեց:

Ես երանի տվեցի շանը, որ հիմա պապի հետ է:  
 Երանի տվեցի նրան. նա գնում է՝ ուր ուզում է, ում հետ  
 ուզում է, երբ ուզում է...  
 Պապը հիմա կգա ու ինձ կփաղաքշի.  
 - Ա՛յ շան լակո՞տ, էս ու՞ր ես կորել, է՞...  
 Ուր որ է՝ պապը կգա...  
 Բայց տատը երևաց իր՝ հողը շոյող մրջնաքայլքով ու  
 դույլով:  
 Ժամանակի ծնունդ հեռախոսիս հիստերիկ բողբոջան  
 նոպան բռնեց...  
 - Տատ ջա՛ն, գնացի...  
 - Բա մածու՞նը:  
 - Պանիր կերա՞՞ հերիք էր, տատ ջան:  
 - Պապդ ուր որ ա՞՞ կգա, ոտդ կախ քից...  
 - Տա՛տ... պապին շատ կբարևես, կպաչես...  
 - Ի~հ, անաբուռ, - ամոթաբույր ժպիտ քրտնեց իմ լավ  
 տատը:  
 - Գնացի, տա՛տ, ուշանում եմ...  
 - Ախ ընչի՞ց ես ուշանում է՞: Էդ քաղաքի գործերը չեն  
 պրծնու՞մ:  
 - Չէ՛, տատ, չեն պրծնում... լավ պահի քեզ ու պապին...  
 - Հա, մեռնեն ջանիդ...  
 - Կգամ, տա՛տ ջան...  
 - Հա՛, մեռնեն... Չուշանաս...

\*\*\*

Քաղաքում գործերը չեն վերջանում, ես եմ վերջանում  
 քաղաքում, իսկ ես, ի հեճուկս բազում էջի քուռակ  
 քաղքենիների, չեն մոռանում, որ սկսվել եմ գյուղում ու  
 գյուղից, ինչպես ցանկացած մեկը, որ պատմություն ունի...

ՆՈՐԱԿԻԹ ԿԱԹԸ ԾԻՐԱՆԵՆՈՒ ՊԵՍ ԾԱՂԿՈՒՄ Է  
ԴՈՒՅԼՈՒՄ...

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - էլի քաղաքացավ: Էս ցնդոները  
քաղաքից բացի ուրիշ բան չունե՞ն քաղաքականացնելու:  
Բայց, մի կողմից էլ որ նայում ես, վատ չի լինի է՞, որ  
քաղաքը քաղաք լինի, գյուղը՝ գյուղ: Ու ասվի.

- Քաղաքը՝ քաղաքացավ:
- Գյուղը՝ գյուղացավ:
- Մարդը, անկախ ֆինանսարդձգից, վերամարդացավ:
- Կյանքը, անկախ իր ապրեցնելու թիրախից, կյանքացավ:

Լավ է... հո ես էլ պոետ չե՞մ դառնա՝ խայտառակ լինենք:  
Անցանք առաջաբանին.

ԷԶ 58

Ինչպե՞ս ստեղծվեց պատառաքաղը.

Անդրադարձ առաջին.

\*\*\*

Մարդը դաշտում խոտ էր հավաքում՝ իր ձեռքով շինած, մի  
քիչ կոշտ ու կոպիտ եղանով: Հավաքեց, դարսեց,  
ընթացքում բերով լիզելով կնոջ՝ նվաղումից գալարվող  
փորի պես ճանապարհը: Երբ արդեն հագիվ էր զսպում  
հայիոյանքի հեղեղը, երևացին կնոջ աչքերն ու քայլից  
գալարվող իրանը: Մարդը մտքում ժպտաց, ուսով մաքրեց  
դեմքի քրտինքի մի մասը ու նստեց իր հավաքած դեզի  
շվաքում: Կինը, ծնկները մի ձևի թեքելով, նստեց նորաձ  
խոտին, խոտը կրքից թրթռաց ու սկսեց ավելի արագ աճել:

Կինը բացեց թմբիկը ՏԲԼԻԿԸ\*: ՏԲԼԻԿ-ն իսկականն էր՝  
աշխատավոր քաղցածի համար:

Ծամ, ծամ, ծամ... չըփ, չըփ, չըփ.

- Դու էլ կեր, աղջի'...

Ու նորից՝ չըմփ, ծամ, չըմ... հըպ:

Կինը, ի պատասխան ամուսնու առողջ գխտոցի, ժպտաց  
ու մատներով մի քիչ ավելուկ վերցրեց լավաշի ծոցից ու  
սկսեց այնպես պահել մատներում, ասես իր վարսերն էր  
շոյում... Հետո դանդաղ տարավ բերանն ու ավելի  
դանդաղ սկսեց ծամել...

Մարդու կրծքում սկսեց մի բան խլվլալ: Հետո խլվլոցը  
կրծքից ընկավ կոնք, ու մարդը հագիվ կուլ տվեց հավի  
կիսածամ կրծքամիսը:

- Էլ մի' կեր, աղջի'...

Կինը ցույց տվեց իր ժպիտի երկրորդ սերիան: Հետո ցածի  
շուրթով սրբեց վերին շուրթը, ու ժպիտը մնաց ստոպ  
կադրի պես... Մարդն էլ չդիմացավ (քանի որ տղամարդ  
էր), վերցրեց կնոջն ու... Մի քանի վայրկյան անց նրա ու  
դեզի ստվերի միջև պառկած էր ճանապարհի պես  
գալարվող կինը.

- Ամոթ ա, ա՛յ ծուռ...

Նորաձ խոտերն ասես հրթիռների նախահայրեր դարձան.  
նրանք հառաչում ու տնքում էին կնոջ փոխարեն էլ, իրենց  
փոխարեն էլ...

Ճանապարհը փաթաթվում էր, բաց էր թողնում մարդուն...

Ճանապարհը թուլանում էր, կծկվում էր, հարթանում էր,  
կեռմանանում էր...

Ճանապարհը խոնավանում էր՝ գարնան առավոտվա  
ցողափռումի պես...

Ճանապարհը վառվում էր՝ ամռան եռացած օդը պահելու պես...

Ճանապարհն ու մարդը տանում էին իրար...

Մարդը մտքում գրում էր աշխարհի ամենակարճ պատմվածքը.

\*\*\*

Էջ 1

ՏՂԱՄԱՐԴ՝ ԿՆՈՋԻՑ ՀԵՏՈ

Չգիտեմ ով ու ինչի համար ստեղծեց կնոջը, բայց կինը ստեղծվեց կողպեքի տեսքով. նրանից հետո ստեղծվեց տղամարդը՝ իր բանալիով...

\*\*\*

Մարդն իրականությունն վերադարձավ, երբ ինքը, իրականությունն ու կինը պառկած էին կողք կողքի՝ անստվեր կանաչի մեջ: Երկրագունդն արդեն թիկունք էր ցույց տվել արևին: Կինը ծնկած, հանգիստ հագնվում էր՝ առանց մտքում ասելու. «Ամոթ չի՞, այ ծուռ...», քանի որ խոտերն այնքան էին աճել, որ օտար ու կրքոտ աչքերն էլ չէին գտնի նրա թիկունքի մերկությունը, որին խալերի պես կպել էին խոտի մանր տերևները: Իսկ մարդը, լուռ ու անհանգիստ, ծխում էր իր եղանից մի քիչ փոքր չիբուխի լիցքն ու մտածում.

- Չէղավ, ա՛յ ախպեր... Էս խոտը վրա տվեց, աճավ, ես հլը քաղածը չեմ հավաքել...

- Բայց ես ի՞նչ մեղք ունեմ:

- Ասի էլ՝ մի՛ կեր, այ քու ծնողը քունեմ...

Ու հորիզոնի պես ողնաշարը կնոջ դարձավ լվացքի պարան՝ հարվածող եղանի հետքերի համար...

Կնոջ լուռ տնքոցներից, հասուն խոտերը, որ մի պահ հանգստացել էին, սկսեցին նոր թափով աճել: Մարդը

նկատեց դա ու հասկացավ, որ կինը մեղավոր չէ: Հասկացավ, որ կինը մեղավոր է լինում, իր մեղքով միայն: Նա չռած մատներով ձեռքի ափը դրեց կնոջ մեջքին ու տեսավ, որ ոչ մի էական տարբերություն չկա՝ եղանի ու իր ձեռքի միջև: Կինը զգաց ու խոտերին ցույց տվեց ժպիտի վերջին սերիան.

- Գնա՞մ, ծուռս:

- Հա...

Երեկոյան, երբ ամուսինը տուն վերադարձավ, կինը սպասում էր: Կինը միշտ էլ սպասել էր ամուսնուն: Ամուսինը դա հենց նոր հասկացավ ու հիշեց ավելուկ ուտելու չարաբաստիկ պատմությունը: Չարաբաստիկ, որովհետև դրա պատճառով նա ամբողջ տարին ոչինչ չարեց՝ միջի խլվլոցը լռեցնելու ջանքից բացի: Չարաբաստիկ, որովհետև միջի խլվլոցը անկողնուց ու գիշերից դուրս էր թռել կնոջ՝ հենց այդպես ուտելու պատճառով: Բայց քանի որ աշխատանքը շատ կարևոր էր նրա համար, նա սկսեց մտածել: Նա սկսեց մտածել՝ ձեռքի հետ էլ հիշելով մատները - ուտելը - եղանը, որը ստվեր էր հավաքել՝ դեզի տեսքով: Եղանը... մատները...

- Հաց դնե՞մ, ծուռս:

- Հա: Ի՞նչ ես էփել:

- Ավելուկ եմ տապակել: Սիրում ես...

- Հա...

Էլի ավելուկ...

Եղան - մատներ - մեջք՝ մատնահետքերով... Կնոջ ցածի շուրթը՝ վերինը սրբող... Ավելուկ... խոտի դեզ... ստվեր... նորաձ խոտ... տարի՝ անաշխատ...

Ելք, ելք, ելք... մուտք, ու վերջին գունդ ավելուկը տանելով բերանը՝ մարդը վեր կացավ սեղանի մոտից, վերցրեց

եղանը: Կինը իր աննկարահանելի ժպիտը մոռացավ: Կինը լացելու չափ ուրախ էր... (սիրեցի այդ կնոջը ես, գիտե՞ք): Մարդը քայլերով դանդաղ հալեցրեց իր ու կնոջ միջև սառած ուղին: Կինը ժպտում էր անգիտակից... Մարդը մերկացրեց նրա մեջքը, նայեց կողոսկրերին նոր կողոսկրեր դարձած հարվածների հետքերին, նայեց եղանին, համբուրեց եղանի մատներն ու կնոջ կողոսկրերը.

- Սպասի, ձագս...

- Կսպասեմ...

Մարդը նստեց ու սարքեց մի փո~քր եղան: Փոքր եղանը տվեց իր ձագին.

- Կե՛ր:

- Կուտեմ...

- Եղանիկը չէ, ա՛յ խփնված: Եղանիկով կեր:

Կինն ուտում էր եղանի նորածին ձագով:

Ամուսինը նայում էր նրան ու նորից հիշում աշխարհի ամենաերկար պատմվածքը.

\*\*\*

### ԷԶ 1

#### ՏՂԱՄԱՐԴ՝ ԿՆՈՋԻՑ ՀԵՏՈ

Չգիտեմ ով ու ինչի համար ստեղծեց կնոջը, բայց կինը ստեղծվեց կողպեքի տեսքով. նրանից հետո ստեղծվեց տղամարդը՝ իր բանալիով...

\*\*\*

Խլրտոցը նորից խլրտաց: Բայց արդեն գիշերն էլ է շուռումուռ գալիս, քանի որ ամառը համբուրում էր նրա կոնքի անկյունները...

Ամեն ինչ ճիշտ էր:

Հիմա ինքը իր ցածի շուրթով կտրեի կնոջ վերին շուրթը: Չէ՞ որ նա կնոջը կին նվիրեց:

Նրանք սկսեցին իրար սիրել պատառ - պատառ...

.....  
**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - Մոռացա ասել. մարդու անունը  
ԳՅՈՒՏԱՐԱՐ է:

ԷՋ 62

Ինչպե՞ս ստեղծվեց պատառաբաղը:

Անդրադարձ երկրորդ:

Ամեն ինչ բարձրակարգ էր:

Սպասքը, ուտելիքը, խմիչքը, նույնիսկ, որքան էլ որ  
զարմանալի է, մարդիկ:

Բարձրակարգ կինը, բարձրակրունկներով, բարձր  
պտուկներով, բարձր քթածակերով, հոգու բարձր ծլիկով՝  
նստած էր բարձր աթոռին, որը բարձր սեղանի մոտ էր:  
Բարձր սեղանին դրված էր մի բարձր ափսե, որից  
բարձրանում էր բարձր սարում սպանված, բարձրաթռիչք  
**եղնիկի** մսից սարքված բարձրակարգ ապուրի  
բարձրահաս, բարձանման գոլորշին:

Այս բլուրների դիմաց նստած էր մի սարահարթ ու բարձր  
շշնջում էր կնոջը բարձրակարգ սիրո էշություններ: Շշնջում  
էր ու արմունկով անօգուտ ջանքեր անում՝ ճնշելու  
շավարի կոնքային մասի՝ նորաճ խոտի  
տրամաբանությամբ հասունացող բարձունքը:

Բայց սրանք՝ հեչ:

Սրանք կարևոր չեն: Սրանք ուղղակի գրեցի, որ իմանաք՝  
կարող եմ նման համեմատություններ էլ անել... (որ  
իմանաք ունից եմ սովորել էս ջրիկանալը՝ կմեռնեք

խնդալուց: Բայց քանի որ չեմ ուզում մեռնեք՝ չեմ ասի: Որ մեռաք, ո՞վ պիտի դաստիարակվի իմ չճանա՞ծ ֆիլմով...):

Մի խոսքով:

Նստած էին: Մեկ էլ, սարահարթի բջջայինի ձայնալարերը թրթռացին: Սարահարթի վերաճող բարձունքը միանգամից փլվեց, քանի որ բջջայինը դրված էր շալվարի խոռոց գրպանի անկյունում...

- Ալո՞:

- Բարև, ախպեր ջան:

- Ա՛, բարև, բարև, ախպերս: Ո՞նց ես, ինչ կա՞:

- Ահ... ինչ ըլնի, այ ցավդ տանեմ... մեռա պրծա արդեն... Էնքան եմ ձեռներով խոտ հավաքել, որ կնկաս ձեռ եմ տալիս՝ չեմ զգում...

- Պա՛հո~... Լավ չի...

- Լսի՛, էդքան փող տվինք՝ ուսում առար էդ համալսարաններից: Մի բան, մի գործիք չես հորինի՞, տաս ձեռս, մի քիչ շունչ քաշեմ... էս կնիկս էլ մի քիչ...

- Լավ, մի բան կմտածեմ...

Սարահարթն անմիջապես հիշեց իր անցյալ անկատարը.

ԷՋ 1

## ԿՄԿՄՈՑ

Երբ նա ընդունվեց համալսարան, աշխարհը բոլորովին այլ ձայներով էր նկարվում նրա կիսափակ աչքերի ստամոքսում: Ծիծաղելի գուցե թվա, բայց նա երագում էր ամբողջ աշխարհի փոխարեն ու ամբողջ աշխարհի համար...

Նրա ճանապարհը սկսվում էր մի թաց մթնոլորտից: Նրա ճանապարհը շարունակվում էր, բայց ելքի մասին նա ոչինչ չգիտեր... ու նրա ճանապարհը շարունակվում էր այս

տրամաբանությամբ, այսինքն, այն տրամաբանությամբ, որը չուներ տրամաբանություն...

Նրա ճանփորդության ելքը ազդապատկերվեց մի կիսադեմով. դրա կեսը փակված էր ակնոցով, մի մասը՝ քթով, մի ուրիշ մասն էլ՝ քրտնքամորթ ճակատով: Քրտնքամաշկ ճակատատիրոջ դեմքին դիմակ կար. նա կեղծավոր ու վատ մարդ չէր, ու դիմակը բոլորովին այլ պատճառներով էր դեմքին:

Նա զարմացած նայեց բժշկի դեմքի վրայի դեմքին, զարմացած ձաձպացրեց փակ աչքերն ու որոշեց ճչալ... բայց, հը՛, ալարեց, ու քնեց առանց թոքային շնչառության մեկնարկի: Թվում էր՝ բժիշկը պիտի ժպտար նորածնի այս չարաձձի կատակից, բայց նա անմիջապես անցավ շատ գործնական ու սրտացավ տառապանքի. ինչու՞ չճչաց այս երեխան, մի՞թե նա վախենալու բան չունի այս «լույս աշխարհում»:

Ապակեպատ խորանարդում հայտնված նորաթուխ քաջը տձևության մարմնացում էր: Նայում էիր, ու մի հարց տոտիկ-տոտիկ գալիս կախվում էր ստորին ատամնաշարիցդ ու սկսում «ձգում» վարժություն կատարել. «Լավ, էս մարդն ինն ամիս ինչո՞վ է գբաղվել իր մոր կլոր խորանարդում, որ հիմա այսքան անկատար է, հը՞...»: Բայց էդ մարդու հեջ պետքն էլ չէր, որ պատասխաներ քո քրտինք արտադրող հարցին. նա ոնց ծնվել էր, այդպես էլ դեռ շարունակում էր ծնվել՝ թքած ունենալով առաջին ճիչի սուրբ ավանդույթին...

...նրա ճանապարհն ավարտվեց մի չոր մթնությամբ, որն անվերջ շարունակվում էր, բայց ... նա մուտքի մասին առայժմ ոչինչ չգիտի...

Ելք... ելք...

Եղբայրը, մեր թվարկության ընթացքում առաջին անգամ, բան խնդրեց: Պետք է մտածել եղբոր ընտանեկան երջանության մասին...

Այս պահին բարձրակարգ կինը բարձր թարթիչներով չխկչխկացրեց՝ իբր զարմանում ու նեղանում է, որ իր ներկայությամբ՝ մտածողն ուրիշի մասին էր մտածում: Հոգապահուստից մի կաթիլ արցունք քաշեց բերեց, որ նախատիքի փոխարեն շարտեր նրա դնչին, բայց... կատարվեց սարսափելին. նրա մոխրագույն բբի կապույտ ոսպնյակն ընկավ ապուրի մեջ: Ախպեր ջանը սկզբում անհանգստացավ, հետո սկսեց բարձրակարգ ծիծաղ արտադրել:

Բարձրաքթածակը շփոթմունքից մատները մտցրեց ապուրի մեջ և մի բարձրակարգ ճիչ ծնեց: Ախպեր ջանը վերցրեց պատառաքաղն ու սկսեց ապուրի մեջ բարձրակարգ փնտրտուք իրականացնել: Հո'պ... Չէ, եղնիկի խաշած առնանդամի մի կտոր էր, չի սազի նրա աչքին: Մի հատ էլ՝ հո'պ... Չէ, եղնիկի աչքն ընդհանրապես չի սազի սրան... Վերջնական հո'պ... Մի խուրձ կանաչ համեմունքի մեջ խրված ոսպնյակը լույս աշխարհի ելավ: Ախպեր ջանը հիշեց իրենց սարի կանաչն ու կանաչի միջի լիճը, որտեղ իրենք լողում էին, իսկ եղնիկները գալիս ջուր էին խմում հանգիստ, ժպտում իրենց անմոռնաժելի ժպիտով ու գնում...

Նա, հենց այդպես, առանց կանաչու միջից հանելու, ոսպնյակը ճպպացրեց բարձրակարգի աչքին ու գնաց:

Մինչև գնալը՝ նա հիշեց աշխարհի ամենակարճ պատմվածքը.

\*\*\*

## ՏՂԱՄԱՐԴ՝ ԿՆՈՋԻՑ ՀԵՏՈ

Զգիտեմ ով ու ինչի համար ստեղծեց կնոջը, բայց կինը ստեղծվեց կողպեքի տեսքով. նրանից հետո ստեղծվեց տղամարդը՝ իր բանալիով...

Հետո, կյանքը ցուցադրեց, որ կնոջը մի բանալին շատ է, երկուսը՝ քիչ...

\*\*\*

Իսկ գնալիս՝ ամբողջ ճանապարհին նա հիշում էր իր անցած ճանապարհը, իր ստորացումները՝ բարձրակարգ դառնալու նպատակով: Նա հիշում էր ու հիշում պատահաբաղդով հանած իր մանկությունը... այգին... այգու մայր առուն...

Տուն հասնելով՝ նա վերցրեց մի պատահաբաղ, ձգեց երկարությամբ, մատների մասը՝ լայնությամբ ու իր ստեղծածը ուսին դնելով՝ ոտքի մատներով բռնեց ՏՈՒՆ տանող ճամփի ձեռքից...

Ահա՛, թե ինչպես ստեղծվեց առաջին եղանը՝ ըստ պատմության:

Մոռացա ասել, որ Ախպեր ջանը ԳՅՈՒՏԱՐԱՐԻ երկվորյակ եղբայրն է...

Այսպե՛ս:

Պատահաբաղի պատմությունն իմացանք:

Հիմա՝ ֆիլմինը:

## ԷՋ 1

Մի օր, մի տեղ եղբայրները ցուցադրեցին իրենց նկարահանած ֆիլմը: Այդ օրն ու այդ տեղը մտան պատմության մեջ, որպես...

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - Էհէ~... Ի՞նչ հեքիաթ է սա:

անէջաթիվ

... ու երբ նախամարդը վերադառնում էր որսից, տոնը կրկնակի էր.

1. նա որս չէր դարձել,

2. նա պատմելու էր.

- ահմլդա հինհստա... շքսաչակնստ վիար սըմբ, տլգկաչըմփ, դըռ...

- Ի՞նչ:

- Ա~հ... ասում եմ՝ Ահմլդա հինհստա...

- Հետո՞:

- Հետո՝ շքսաչակնստ վիար սըմբ, տլգկաչըմփ, դըռ...

- Ա՛յ ընկեր, չեմ հասկանում:

- Թու~, քո մալդա գմբեզիպ պօհլճ...

Ի՞նչ էր մնում խեղճ նախամարդուն անել, եթե չէին հասկանում պարզ ու բնական լեզուն: Նա... ճիշտ էք, սկսեց ֆիլմ նկարել: Այո՛, դժվար էր. չկար պրոդյուսերական դպրոց, չկար ժամանակակից տեխնիկական սպասարկում, չկային անհրաժեշտ ողնուղեղով դերասաններ: Շատ դժվար էր: Ստիպված, օգտագործում էր ձեքի տակ եղած միջոցները. ժայռ և պատկեր: Սրանից կարող ենք մի այլ կարևոր եզրահանգում անել. առաջին կինոթատրոնը, իրականում, նախամարդը ստեղծեց: ժամանակը դարձավ բայ: Մարդը փոխվեց, փոխվեցին մարդու պահանջները, զարգացավ պրոդյուսերական դպրոցը: Ու մի պահ եղավ. մարդն ուզեց, որ կինոն գա իր մոտ: Գիտության զարգացումը զարգացրեց ֆիլմարտադրությունը: Ժայռի նախահիմքով ստեղծվեց ժապավեն. մի քիչ ավելի ուշադիր նայեք թանգարանային նմուշ դարձած ժապավենին. ժայռ չէ՞,

ասե՛ք: Մի քիչ ավելի ուշադիր նայեք ցանկացած ֆիլմ.  
որսի պատմությունն չէ՞, ասե՛ք...

Ա~յ քեզ, այ քե~զ... Իսկ ես մինչև հիմա իմացել եմ, որ  
կինոարվեստը շատ երիտասարդ տեսակ է, դու մի ասա,  
այսքան հին պատմություն ունի: Ու հետաքրքիր է, ի՞նչ եմ  
սովորել մեր կինոբուհում այսքան տարի...

Ի դեպ, այս պատմավարկածի ու անժապավեն  
կինոնախագծի հեղինակը Գի Րէն է: Սրա համար  
տեղական ֆիլմարտաթրոդները նրան հերետիկոս  
անվանեցին, իրենց փչացրած ժապավեններից խարույկ  
վառեցին ու Գի Րէին տարան խորովելու: Իսկ Գի Րէն ի՞նչ  
արած լինի, որ լավ լինի. Հեքիմին, ողջակիզումից մի օր  
առաջ (դե, բոլոր քաղաքակիրթ երկրներում  
ողջակիզվողին մեկ օր առաջ տեղեկացնում են  
ողջակիզման մասին: Փառք ու պատիվ նրանց...) զգուշացնում է ու խնդրում, որ տեսախցիկը վերցնի հետը:

**Հեքիմ** – Ինչի՞դ ա պետք:

**Գի Րէ** - Կնկարես՝ ոնց եմ վառվում:

**Հեքիմ** - Գի Րէ՞, գիժ ե՞ս:

**Գի Րէ** - Արա՛, ինչ ասում եմ, կեղտո՛տ... (այս բառը նա  
ասում էր միայն մաքուր մարդկանց): Էլ նման առիթ չես  
ունենա: Ամենաճիշտ ֆիլմը կլինի, ոչ մի սուտ ու  
խաբեություն...

Սա էլ առաջին քաղաքակիրթ փաստագրական ֆիլմի  
պատմությունը: Պատմություններով հարուստ ենք:  
Պատվերներով էլ: Ո՞վ ասաց, որ պատմությունը ճիշտ է:  
Ո՞վ կասի, որ պատմությունն էլ պատվերով չի գրվել...

հողվածը՝ Կինոբուհի կարմիր դիպլոմակիր  
(գրման տարեթիվը վառված է)

Լա՛վ էի... իմ սիրտը ու էս վեհ վերլուծությունը: Լավ էլ իրար բռնում են: Ի՞նչ անեն: Ֆիլմս մնաց: Լյարդն էլ ուր որ է կգա: Ստիպված՝ պատառաքաղով պիտի նկարեն: Սկսեցինք: Մոտո... Ա~յ քեզ անհաջողություն: Բայց ես պատառաքաղ էլ չունեմ... Ի՞նչ անեն բա հիմա ես... Հա, լավ, իմացա... Պատառաքաղի բնորոշով. վերցնում ենք սեփական ձախ ձեռքը, ցուցամատով ու միջնամատով ցույց տալիս, թե քանի պատմական վարկած կա պատառաքաղի մասին... Ապրե՛նք մենք... Նույնը՝ աջով, բայց ցույց ենք տալիս, թե քանի պատմական վարկած կա ֆիլմի մասին... Շատ ապրենք մենք: Հիմա երկու ձեռքերի վերոցուցյալ մատների կոմբինացիան մոտեցնում ու կպցնում ենք իրար՝ խաչաձևելով... Ճի՛շտ է: Ստացված անցքն էլ մեր տեսախցիկի օպտիկան է: Մատների բացուխուփով կստանանք պատկերը մեր ուզած պլաններով՝ խոշորից ավելի խոշոր:

Գնացինք:

Եվ այսպես.

Ֆիլմի վերնագիրը - ԱՄՕԹ

Ժանրը - փաստավավերաաբստրակտ տրագիկոմեդիա

Տևողությունը – Ինչքան որ կտևի

Սցենարը – ԻՆՉ-ՈՐ ՄԵԿ

Ռեժիսոր - Ես

Պրոդյուսեր – Լյարդ

Քանի քիթս էլ արյուն չի լացում, սկսենք:

## ՉԱԽ ԿՈՂՄԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Փայծաղում պահեստավորվում է օգանիզմի արյունը:

Փայծաղում մեռնում են արյան կարմիր գնդիկները:

*ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ*

*Փայծաղը քո հայրենիքն է...*

*«ԴԵՂԻՆ ՄԱՐԴՈՒ ԿՈՇԻԿԸ» էպոսից*

## ԱՄՕԹ

ԿԱԴՐ 1

ԱՂՋԻ~ԿՍ...

**ԲԺԻՇԿՆԵՐԸ ՀԻՎԱՆԴ ԵՆ...**

... աղջիկն այնպես շարժվեց, որ իբր միամիտ էր – հատուկ չէր անում: Նրա անկրծկալ մարմինը ծածկոցից բաժանվում էր մի վագրենի շապիկով, որն ասես հրահանգով շարժվեց վեր՝ նկարեց աղջկա շուրթ չդիպած ողորկ փորի ձախ կեսն ու աչք չկպած ստինքի՝ ցածի մեկ երրորդը... Բայց աղջիկն այնպես էր քանդակել այդ դիրքը, որ ուր որ է, պիտի համոզեր, թե իբր միամիտ է ու դիտմամբ չի անում...

... տղան դանդաղ մոտեցնում էր իրեն անկողնուն...

... աղջիկը շնչում էր անձրևով թմրադեղվողի թոքերով, երևակայությամբ ու լիասպառ նվիրումով...

... անկողինը դանդաղ ընկալում էր տղայի քայլերն ու իր ներքնակավերմակային կոկետ ժպիտով սպասում...

... վերոնշյալ ժպիտին շրթներկ դառած՝ աղջիկը  
շարունակում էր նույն դանդաղությամբ մնալ այդպես  
քաշող և նույն արագությամբ հալեցնում էր իր ու տղայի  
միջև արթնացող օդը...

... տղայի առաջնային նպատակը համոզվելն էր, որ  
աղջիկը դիտմամբ չի մնացել այդ բնորոշային դիրքով...  
...տղայի քայլերը կլինիկական մահով պառկեցին աղջկա  
անկողնու մոտ...

...տղայի ձեռքերը էլեկտրաշոկի արդուկների պես  
մոտեցան աղջկա փորի ձախ կեսին ու ստինքի մեկ  
երրորդին...

.....  
Տղան համոզվեց, որ աղջիկը դիտմամբ էր արել այդ  
ամենը....

Համոզվեց, երբ վերմակով ծածկեց անկեղծորեն քնած  
աղջկան ու իր մաքրությունը...

...աղջիկը քնած էր աշնան անձրևի պես մաքուր  
հորիզոնում՝ փորի ձախ կեսն ու ստինքի մեկ երրորդը  
նվիրած գիշերվա տեսախցիկին...

## **ՈՐՊԵՍ ՎԵՐՋԱԲԱՆ**

Թյուրիմացություն չստեղծելու համար նշեմ,

Ստոպ... նկարված է:

Դե հիմա արի սրա շարունակությունը գտի... Երևի սա է°...

## **ԿԱԴՐ 2**

**Լցված փողոցի սպասուհին**

Լսի՛, էնքան հետաքրքիր էր:

Փողոցում ոչ ոք չկար՝ ո՛չ մարդ, ո՛չ էլ մարդուն դազադած մեքենա. կային փողոցներ միայն, կային միայն լուսակիրներ (կարծեմ հիմա էլ կան դրանք...) ու կար առավոտ դարձող գիշեր. կային իմ քայլերն այնտեղ, կային օդում՝ քայլերիս հետ քայլող ձեռքերս, կային այս ձեռքերումս շիշ՝ գարեջրով լցված, կար գլանակ՝ թույն թութունին գրկած:

Ու եղավ հանդիպում մի թեթև՝ հայացքով հայացքին նրա. կար կիրք ու սաստում, կար պահանջ, կար կարոտ ու կար մեծ, լուռ հավատ, կանգնել էին քայլերս, կիսով չափ հարուստ շիշն ու ճիշտ այդքան էլ մեռած գլանակս էին կանգնել, նայում էին ակնահույ՝ աչքերիս, աչքերիս, որ նայում էին նրան: Ես այնքան մաքուր ինձ զգացի, բայց այնքան կեղտ կար իմ մեջ... նայում էի, ժպտում ու շարունակում մաքրվել, ինչպես համակարգիչը՝ վիրուսներից...

տխուր էի, գիտե՞ս... ծուռմշտիկ, ծիծաղելի ժպտի չափ տխուր...

տխուր էի, որ սա է իմ ժամանակը, որ դառել եմ քայլող համակարգիչ...

տխուր էի, որ սա է իմ ժամանակը, երջանիկ, որ այսքան սիրում եմ նրան...

տխուր էի, երջանիկ ու հիմար...

կանգնելուս ընթացքում այս արագ՝ հասցրեցի նայել շուրջս ու գտա բաներ իմ շուրջը, որ երբեք չէի կորցրել իմ կյանքում, հիշեցի, որ կորցրել եմ բաներ, որ երբեք չեմ տեսել իմ կյանքում, որ երբեք ինձ չեն... չեն եղել... ինչ հիմար տխուր էի, երջանիկ... ապրել էի, ապրում էի ոնց որ թե, բայց... «այ քեզ բան», շատ բաներ հասկացա, որ երբեք չեմ կանգնել ու տեսել, որ երբեք չեմ հասցրել

հանդիպել, քանի որ (պա~հ, էլ ոնց կլիներ) ես լիքը գործեր  
միշտ ունեմ ու շտապում եմ անընդհատ, անհմաստ...  
Լուսակրի կարմիր լույսը փոխվեց... մի հատ էլ...  
Ես հանգիստ ու առանց ավելորդ լարվածության անցա  
դատարկ փողոցը՝ հակառակ մայթի աղբարկղին նվիրելով  
գարեջրի ու ծխախոտի մնացորդները...

Ստոպ... Նորմալ է: Մոնտաժով տեղը կգցենք... Գի Ռէի  
խորոված ականջից հեռու...

### ԿԱՂՐ 3

#### Շարժվող տեսախցիկ

(ընդհանուր պլան)

Հանրույթը խտացավ, ամրացավ ու դարձավ...

մի հսկա փայծաղ:

(միջին պլան)

Հանրույթում ծնվում ու մեռնում էին

բազմամիլիոն գնդիկներ:

(ծծելը՝ խոշոր պլանով)

Կառավարությունը ծծում էր հանրույթի միջուկը...

Ստոպ... Չդատվենք՝ լավ կլինի... Ա~հ, ինձ ի՞նչ: Լլարող  
թող մտածի...

### ԿԱՂՐ 4

Երկիր մոլորակը դարձավ Հանրապետություն:

### ԿԱՂՐ 5

Պոռնկությունը վատ քաղաքականություն է:

## ԿԱՂՐ 6

Անոթույքը տխրեց:

## ԿԱՂՐ 7

ԱՄՕԹԸ Երկիր Հանրապետության (ԵՀ)  
քաղաքացի է:

## ԿԱՂՐ 8

Անոթույքը սգավորվեց:

## ԿԱՂՐ 9

ԱՄՕԹԸ ստացավ երկքաղաքացիություն:

## ԿԱՂՐ 10

Անոթույքը սգերիզ մագ- մորուքը դարձրեց նորաձև:

## ԿԱՂՐ 11

ԱՄՕԹԸ ԵՀ-ից ուզեց տեղափոխվել Յոթերորդ  
տիեզերք:

## ԿԱՂՐ 12

Անցագրային կետ: Խնդիրներ:

## ԿԱՂՐ 13

ԱՄՕԹ - Բայց ես երկքաղաքացի եմ, ահա՛  
անձնագիրս:

**Անցակետ** – Յոթերորդ տիեզերքում նոր օրենք կա.  
առանց աղ ու հացի չեն ընդունում, իսկ Դուք  
անաղուհաց եք:

#### ԿԱՂՐ 14

Մենություն: Գիշերվա ով իմանա քանիսը:  
**ԱՄՕԹ** - Բայց ես վերնակով ծածկեցի անկեղծորեն  
քնած աղջկան ու իր մաքրությանը...

#### ԿԱՂՐ 15

Մենություն: Առավոտբարլուսով:  
**ԱՄՕԹ** - Բայց ես լցված փողոցի սպասուհուց  
պատգամ ունեի փոխանցելու:  
**Մենություն** – Ի՞նչ պատգամ:  
**ԱՄՕԹ** – Սիրիր քո ԵՀ-ի պետականությունը:  
**Առավոտ** - Դա բոլորն էլ սիրում են:  
**ԱՄՕԹ** – Ո՛չ, բոլորը սիրում են ԵՀ-ն, իսկ ես պիտի  
սիրեմ պատգամը, որն ավելի դժվար է:  
**Մենություն** - Է, սիրի, ո՞վ չի թողնում:  
**ԱՄՕԹ** - ԵՀ-ն: Չի թողնում մի քիչ հեռանամ,  
օրինավոր հեռանամ, իմ սիրելիներին թողնելով  
հեռանամ, իմ փայծաղը լքելով հեռանամ, որ զգամ  
պատգամի սիրո կարևորությունը:

#### ԿԱՂՐ 16

**ԱՄՕԹ** – Համ էլ ես անաղուհաց չեմ, եղա՞վ:

#### ԿԱՂՐ 17

Յոթերորդ տիեզերք: Սպասում:

## ԿԱՂՐ 18

ԵՀ: Տրորվող փայծաղ:

## ԿԱՂՐ 19

ԱՄՕԹՆ անցավ աշխատանքի: ԱՄՕԹԸ մաքրում է փողոցները, բայց նա բժշկի դիպլոմ ունի:

## ԿԱՂՐ 20

ԱՄՕԹԸ հիվանդացավ:

## ԿԱՂՐ 21

ԱՄՕԹԸ մենակ պառկած մեռնում է, ինչպես ծնվել է մենակ:

## ԿԱՂՐ 22

ԱՄՕԹԸ մենակ մեռնելով մտածեց. «Ինչ ամոթ է, որ մեռնում եմ»:

## ԿԱՂՐ 23

Ամոթույքը սգահան եղավ Յոթերորդ տիեզերքում:

## ԿԱՂՐ 24

Պոռնկությունը վատ քաղաքականություն չէ:

ՎԵՐՋ...

## ԿԻՆՈՉԵՏՆԵՐԸ «ԱՄՕԹ» ՖԻԼՄԻ ՄԱՍԻՆ

### *«Առավոտ շուտ՝ բարոյասխառը» օրաթերթ*

Քնելուց առաջ երկար մտածում էի ֆիլմի մասին. դրանից նյարդայնանում էի, քանի որ անհմաստ է ժամանակի էներգիան կորցնել՝ մտածելով հիմարության մասին ու... Ամենաառաջին հարցը տամ այդ «ռեժիսոր» կոչվածին.

- Ո՞վ է ԱՄՕԹը: Հերթական բառախաղ՝ մի քանի հանդիսական ու հողված պոկելու համար, թե՞... Ի՞նչ...

Ֆիլմը սկսվում է անհիմն ու անհասկանալի սեռական հարաբերության նախապատմությամբ, հասնում, չգիտես ինչու, հանրույթ, հետո դառնում քաղաքականացված, անհեթեթ պատմություն... Մի խոսքով, ոչինչ պարզ չէր, ոչինչ չտվեց այս ֆիլմը ինձ, թե՛ որպես հանդիսատեսի, թե՛ որպես կինոքննադատի... Իզուր ժամանակ ու նյարդեր փչացրի՝ կարդալով ֆիլմի մասին գրված հողվածները: Ոչ նայել եմ, ոչ էլ ցանկություն ունեմ նայելու...

ԹԻՎ 1 ԿԻՆՈՉԵՏ

\*\*\*

### *«ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՍԱՀՈՒԹՅՈՒՆԸ» Ժամաթերթ*

Էս Երկիրն էն աշխարհը չի, որ ասես. հա, լավ կլինի: Էս Երկիրն էն աշխարհն ա, որ պիտի լավը դարձնես... Այ, օրինակ, մի բան պատմեմ. տատիս զոզնոցում գենետիկա կար: Տատս իր գենետիկայի գրպանից մի բան էր հանում. էդ շատ կարևոր էր, բայց դրա կարևորությունը հիմա եմ հասկանում, երբ տատս չկա, բայց իր գենետիկան կա: Իսկ տատս իր գենետիկայի գրպաններում պահում էր կոնֆետ, փող, թաշկինակ, որի մեջ փողն էր, ձեռք, որը դողացող էր ու իրենն էր ու որով գրկում էր ինձ և դողս անցնում էր...

Հետո նույն գենետիկայի շարունակությունը կար տատի դեմքին՝ կնճիռների արանքում, ինչպես մասուրի սերմերի արգանդում՝ փշուկները: Երբ շնչում էի տատի գոգնոցային գենետիկան, նրա դեմքից թափվում էր մի ուրիշ՝ շարունակվող գենետիկա. սա այն գենետիկան էր, որը ծնողներիս մեջ չի հասցրել տեղավորվել... Մի քիչ հետո, երբ ձեռքս դնում էի տատիս ուսին, զգում էի պապիս ձեռքի ուժը. մոռացա, սկզբում պիտի ասեի, որ պապս մեռավ իր ծննդյան օրից մի օր առաջ... Հա, պապիս ուժը զգալուց քիչ անց տատս համբուրում էր այտս ու ինձ ճանապարհում: Ես ձեռքս դնում էի թաց այտիս, մի քանի դար պահում, հետո ձեռքս պահում էի դիմացս ու պապիս շուրթերն էին երևում... Պապս սկսում էր պատմել.

### **ՀԱՆՃԱՐԵՂ ԵՐԵՒԱՆ**

Պապս հանձար էր:

Մի օր գնացի մոտը:

Մի բան արեց, ու մինչև հիմա գնում եմ մոտը:

Մի բան է անում հիմա՝ իր մոտից ետ է ուղարկում:

Հանձարեղ բան է անում, չգիտեմ ինչ. երևի կիմանամ, երբ ես էլ դառնամ ՊԱՊ:

Հա, մի օր մոտը գնացի, դրա մասին էի չէ՞ ասում:

Շատ կարևոր է, երբ մի բան ես ասում, մինչև վերջ ասես, թե չէ ինչի՞ նման կլինի, մի բան ասես ու մինչև վերջ չասես... չգիտեմ ինչի նման կլինի, բայց երևի արդեն նյարդայնանում եք, չէ՞, որ այսքան ձգձգում եմ...

Պապս ասելիս՝ ոչ մեկի նյարդերը զսպանակ չէր դարձնում.

դե, նա հանձար է, կատակ բան չի է՞:

Գոնե մի մազ քաշեի պապիս, էլի...

Վերջը գնացի, ասի՝ պապ, փող կտա՞ս...

Նայեց անաշխատ ձեռքերիս, ուշացածի ամոթ հունցող  
աչքերիս, հանեց իր ժամանակացույցն ու տվեց ինձ.  
«Փողն ինքդ աշխատիր. եթե մեկը հենց էնպես փող տա  
քեզ, մի՛ վերցրու, որովհետև, մեկ ուրիշը հենց էնպես էլ  
քեզնից կվերցնի... փողն էնպես աշխատի, որ թռռո՞  
չամաչի քո փոխարեն»:

Ես ինչ ասեցի՞... չէ, սխալ եմ ասել. ՆԱ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ  
տվեց ինձ...

Մեռնելուց առաջ էլի լիքը բաներ ասեց. հետո կպատմեմ:

Հիմա ես միլիարդատեր եմ ու հանձարեղ, բայց ինչ անում-  
չեմ անում, ՊԱՊ չեմ կարողանում դառնալ. ստիպված՝  
հայր պիտի դառնամ, ի՞նչ անեմ...

Հա, ի՞նչ... Ի՞նչ ծիծաղելի բան կա հայրության մեջ...

Ի՞նչ...

Ինչ եմ ուզում ասեմ. կինոն էլ ա աշխարհ, ու էս Երկիրն էն  
կինոն չի, որ ասես, հա, լավ կլինի: Ես Երկիրն էն կինոն ա,  
որ պիտի լա՛վը դարձնես՝ ունենալով միլիարդ,  
հայրունակություն: Հանձարն իրան- իրան կլինի:

ԱՍՕԹ ֆիլմը վատը չէր, բայց ես մի բան չհասկացա.  
տղերքը ինչի՞ չէին մոնտաժ արել: Բայց մի կողմից էլ որ  
նայում ես, էդ էլ անհետաքրքիր չի: Կարող ա կապ չունի  
ֆիլմի հետ, բայց ասեմ, թե ինչի համար ա էդ «ՈՆՑ ՈՐ  
ԿԱ» տարբերակը ինձ հարազատ: Անցյալդ էլ չես կարա  
մոնտաժ անես, կդառնա շանտաժություն: Իսկ էդ վատ ա...

Մեկ էլ ուզում եմ իմանամ՝ երբ են ցույց տալու ֆիլմը՝ գնամ  
նայեմ:

ԹԱՆԿԱՐԺԵՔ ԿԻՆՈԳԵՏ

\*\*\*



Ջուգարանի դուռն ինչպես բաց էր մնացել, այնպես մնաց  
անփակ:

Ճըրըռ, ճըրըռ, ճըրըռ, մըրըռ...

Հայրս, ինչպես արթնացել էր, այնպես էլ պատրաստվեց  
քնելու...

Շուրթերս, որոնք գտել էին կնոջս արևահալ բերանն ու  
այդպես էլ մնացել` կանգառ արած կադրի պես,  
շարունակեցին իրենց ամենօրյա փնտրտուքը: Փնտրտուք,  
որը միշտ ավարտվել է որևէ կիսատ գյուտով: Ու հենց այն  
պահին, երբ կինս արդեն արթնացել էր ու շրթախույզը  
վերածվել էր մարմնամարզության...

Ճընգ, ճընգ, պընգ...

Մայրս է: Ոնց որ հորս ամուսինը լինի... ի~նչ սովորությանին  
նմանությու~ն...

Ճըրըռ, ճըրըռ, ճըրըռ, մըրըռ...

Հայրս, բնականաբար, պիտի ուղեկցի արթնացած կնոջը  
ուր որ հարկն է: Չեմ գարմանա, եթե նա երկտեղանոց  
դագաղ պատվիրի...

Փըստ, փըստ, փըստ...

Մայրս մի քիչ շուտ շարժվեց: Դե, ամեն դեպքում,  
պահանջն իրենն է...

Քըստ, փըստ, քըստ, փըստ, քըստ, փըստ...

Նրանք ձեռք ձեռքի այնպես են քայլում, ասես ՋԱԳՍ-ից  
նոր դուրս են եկել ու մտնում են նոր կյանք...

Մի խոսքով. հասան նոր կյանք, մտան, ապրեցին, դուրս  
եկան, նորից քըստա-փըստային համանվագ, որը  
շարունակվեց ճըռաճընգային վերջանվագով, ու...

Էլ ի՞նչ: Կինս երագում արդեն հերթական երկսենյականոցն  
էր գնում, որի հատուկ ծայնամեկուսացված պատերի

վկայությամբ դավաճանում է ինձ, իսկ ես հասկանում եմ, որ անկարող եմ աշխատել նման պայմաններում:

Ի՞նչ եմ ուզում ասել: Հիմա, երբ էլ ջահել չեմ, երբ էլ չեմ կարող սպասել, հասկանում եմ, որ, կինն էլ կինո է. հենց կիսատ սիրես, կմեկուսանա ու կդավաճանի քեզ:

Բայց կինոն չի կարևորը. ինչ էլ անես՝ նույնն է: Չեմ կարող չխոստովանել, որ հիմարություն է երագել մի քանի սենյականոցի մասին, ինչ է՝ աշխատասենյակ ունենաս...

Ինչ էլ անես՝ էլի մնալու ես քո միսենյականոց մոլորակում, որտեղ ունենալու ես քո գորգն ու անցնելու ես ամենաանհարմար պահին, երբ ստեղծագործում է թոռը:

Անցնես ու անցյալին թողնես արյանդ կարմիր զնդիկների քամուկը... Ինձ թվում է, որ ֆիլմը արյան կարմիր զնդիկների մասին չէ, բայց կարող էր լինել: Շնորհակալություն ծափերին հարություն տալու համար:

ՍԿՍՆԱԿ ԿԻՆՈԳԵՏ

\*\*\*

ՊԱՏԱՍԽԱՆ ԿԻՆՈԳԵՏՆԵՐԻՆ ՈՒ ՈՉ ՄԻԱՅՆ...

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - Այ ձեր ցավը տանեմ, այ ձեր հոր աստծու ցավը տանեմ, սպասեք ֆիլմս նկարեմ, վերջացնեմ, նոր դանակ պատառաքաղներիդ առեք-ընկեք ջանիս: Ընդամենը՝ մէկ վայրկյան է նկարված: Ի՞նչ եք ուզում ինձնից, ո՞վ է ձեզ ասել, որ ֆիլմը պատրաստ է:

**ԹԻՎ 1 ԿԻՆՈԳԵՏ** - Օ~, ինչպիսի խայտառակություն: Ինչպե՞ս թե՛ ով է ասել: Նա՛ է ասել:

**ԹԱՆԿԱՐԺԷՔ ԿԻՆՈԳԵՏ** – Ինքը, ինքն ա ասել՝ անմահ ախպեր:

**ՍԿՍՆԱԿ ԿԻՆՈՉԵՏ** - Այն (տղա էր, թե տղամարդ, լավ չզգացի) մեծաքիթն ասաց:

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - Հա՛, բայց ո՞վ. լիքը ինքնանպատակ «ինքեր», «նաեր» ու «մեծաքթեր» կան: Ո՞ր մեկն էր:

**ԼՅԱՐԴ** - Ես:

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - Ե՞ս:

**ԼՅԱՐԴ** - Այո՛, ես: Ես իրավունք ունեմ չէ՞, իմ ապրանքի հետ վարվել իմ ուզած ձևով:

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - Հա, բայց, հասկացե՛ք, սխալ է չժնված երեխային օտար լեզվի կամ լողի պարապմունքի ուղարկելը: Նա դեռ պիտի նախալեզուն սովորի, վարժվի ջրին՝ նոր: Ինչու՞ եք սպանում երեխային:

**ԼՅԱՐԴ** - Որ ես ապրեմ:

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - Առանց երեխայի ապրե՞լ: Անհնար է: Իսկ անհնարին ձգտողներն ու, որ ամենավատն է (կամ՝ լավը, չգիտեմ), հասնողները կործանվել ու կործանվում են: Վկան՝ Երկիր մոլորակը, հիշու՞մ եք:

**ԼՅԱՐԴ** - Իմ նախնիների ու իրենց ապրած տարածության պատմությունն ինձ չի հետաքրքրել, չի էլ հետաքրքրում: Լավ, երեխաների թեման փակենք: Կնճռոտ ճակատով հոգի ինձ չի սագում: Ե՞րբ եք վերջացնելու ֆիլմը:

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - Երբ երեխաս ծնվի:

**ԼՅԱՐԴ** - Ա~, շնորհավորում եմ:

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - Ի՞նչն եք շնորհավորում:

**ԼՅԱՐԴ** - Ամուսնանալը:

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - Բայց ո՞վ ասեց, որ ամուսնացել եմ:

**ԼՅԱՐԴ** - Իզուր էլ զարմանում էի. ապրելաձևիդ պես էլ ֆիլմ ես նկարում: Մի բացատրական բառարան էլ կգրես, կավելացնես ֆիլմին:

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - Էդ կարգի ե՞նք ապաճել:

**ԼՅԱՐԴ - Ի՞նչ:**

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ -** Ասում եմ՝ հա, կգրեմ... այսինքն, վաղուց գրված է, ես ոչ մի նոր բառ չեմ հորինել:

**ԼՅԱՐԴ -** Դե տուր, որ գովազդս շարունակեմ ու կինոգեոմերի, կինոգեոտերի հետ խնդիրներ չունենամ:

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ -** Վերցրեք...

\*\*\*

**«ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ»**

**ԱՄՕԹ -** Առանց Մշտական ՕԹևանի

**Ամոթույք** – Մարդու մարմնի այն մասը, որը ամոթ է ցույց տալ կամ տալ ուրիշներին:

**ՏԲԼԻԿ** – Տնից Բերված Լի Կապոց

\*\*\*

**ԼՅԱՐԴ -** Վերցրինք: Իսկ դու շարունակիր նկարել: Սա շատ վատն է: Չեմ ուզում: Դուրս չի գալիս: Վերնագրից սկսած՝ վատ է: Փոխեք ամբողջը:

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ -** Մի բան հարցնեմ, հա՞: Ինչու՞ եք ինձ հետ մեկ «Դուքով» խոսում, մեկ՝ «Դուով»:

**ԼՅԱՐԴ -** Որովհետև մեկ շատանում ես, մեկ էլ՝ քչանում եք:

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ -** Պարզ է: Իսկ ինչո՞վ նկարեմ:

**ԼՅԱՐԴ -** Եսախցիկով:

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ -** Լավ:

**ԼՅԱՐԴ -** Ես չեմ հարցնում՝ ինչպիսի՞ն կուզեիր լինել կյանքը: Ասում եմ՝ սկսեք աշխատել: Ի դեպ, կարող է նաև բազմասերիանոց լինել...

Նոր ֆիլմի վերնագիրը - ՆՈՐ ԱՄՕԹ  
Ժանրը - փաստավավերաաբստրակտ տրագիկոմեդիա՝  
առանց կոմիկության  
Կրիչ - Եսախցիկ  
Տևողությունը – Ինչքան որ կտևի  
Սցենարը – ՆՈՐ ԱՄՕԹԻ հուշերը  
Գործողության վայրը – Միջին ականջ  
Ռեժիսոր - ՄԻ ՌԻՐԻՇ ՄԱՐԴ  
Պրոդյուսեր – Լյարդ

## **ՆԵՐՔԻՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ**

Լսողության օրգանը կազմված է. արտաքին  
ականջ, միջին ականջ, ներքին ականջ:

*Կենսաբանություն*

## **ՆՈՐ ԱՄՕԹ**

Իսկ այն, ինչին մենք ապրել ենք անվանում, իրականում,  
միջին ականջում ինքնահաստատվելու անընդհատ փորձ  
է՝ անցյալի ու ապագայի ազդակներից դողացող փորձ...

*«ՔՆԱԾ ՉՂՋԻԿԻ ՎԵՐԵԼՔԸ»*

*ԳարՍու*

### **Շարժիչ**

### **Առաջին սերիա**

Էն մարդուց մի վախեցի, որ հետո է. նա յոթերորդ  
տիեզերքից է:

### **Կանգիչ**

ԿԻՆՈՉԵՏՆԵՐԸ «ՆՈՐ ԱՄՕԹ» ՖԻԼՄԻ  
ՄԱՍԻՆ

«Առավոտ շուտ՝ բարլուսախառը» օրաթերթ  
Քնելուց առաջ երկար մտածում էի ֆիլմի մասին. դրանից  
նյարդայնանում էի, քանի որ անհմաստ է ժամանակի  
էերգիան կորցնել՝ մտածելով հիմարության մասին ու...  
Ամենառաջին հարցը տամ այդ «ռեժիսոր» կոչվածին.  
Ո՞վ է ՆՈՐԱՄՕԹը: Հերթական բառախա՞ղ՝ մի քանի  
հանդիսական ու հողված պոկելու համար, թե՞... Ի՞նչ...  
Ֆիլմը սկսվում է անհիմն ու անհասկանալի սեռական  
հարաբերության նախապատմությամբ, հասնում, չգիտես  
ինչու, հանրույթ, հետո դառնում քաղաքականացված,  
անհեթեթ պատմություն... Մի խոսքով. ոչինչ պարզ չէր,  
ոչինչ չտվեց այս ֆիլմը ինձ, թե՛ որպես հանդիսատեսի, թե՛  
որպես կինոքննադատի... Իզուր ժամանակ ու նյարդեր  
փչացրի՝ կարդալով ֆիլմի մասին գրված հողվածները: Ոչ  
նայել եմ, ոչ էլ ցանկություն ունեմ նայելու...  
Կամ այդ ԳարՍուն ո՞վ է, որ ցիտվել է:

ԹԻՎ 1 ԿԻՆՈՉԵՏ

\*\*\*

«ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆԸ» ժամաթերթ  
Էս Երկիրն էն աշխարհը չի, որ ասես. հա, լավ կլինի: Էս  
Երկիրն էն աշխարհն ա, որ պիտի լավը դարձնես... Այ,  
օրինակ, մի բան պատմեմ.

ՆԵՐՎԱՅՆԱՑԱԾ ՊԱՏԱՍԽԱՆ ԿԻՆՈՉԵՏՆԵՐԻՆ ու ՈՉ ՄԻԱՅՆ

**ՄԻ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ** - Հարգելի էշի քուռակներ. ձեռներդ կտրե՛ք...

**ԹԻՎ 1 ԿԻՆՈՉԵՏ** - Կըտր:

**ԹԱՆԿԱՐԺԵՔ ԿԻՆՈՉԵՏ** – Կըտր:

**ՍԿՍՆԱԿ ԿԻՆՈՉԵՏ** – Կըտր:

**ԹԻՎ 1 ԿԻՆՈՉԵՏ - ԹԱՆԿԱՐԺԵՔ ԿԻՆՈՉԵՏ – ՍԿՍՆԱԿ ԿԻՆՈՉԵՏ** – Կտրեցինք...

**ԼՅԱՐԴ** - Մի ըռպե, բայց մենք այլ բան էինք պայմանավորվել... Եկեք բանակցենք:

**ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

... պատվիրատուի հետ բանակցություններն ավարտվեցին նրանով, որ նա ձեռքի հակառակ կողմով՝ չըռըռըռըռըռի, խփեց իմ ապագա երեխաների ակունքին: Ցավս բերանիս ծամոնը դառավ. բռնեցի ու չոքեցի... Աչքերիս առջևով անցան ժպիտներն ամբողջ աշխարհի մանչոների՝ ծնված ու չծնված, մեռած ու մեռնող մանուկների աչքերն անցան աչքերիս առաջով... Շարունակում էի բռնած պահել: Ցավն ավելանում էր: Սեղմում էի ավելի ուժեղ՝ ենթագիտակցորեն կամ առանց ենթայի: Ու երբ աչքերիս առջևից անէացան ժպիտներն ամբողջ աշխարհի մանչոների՝ ծնված ու չծնված, մեռած ու մեռնող մանուկների աչքերն անէացան աչքերիս առջևից, թողեցի պատվիրատուի կոկորդն ու նստեցի կրծքին: Հիշելով, որ հետույքով սրտի աշխատանքը լավ չի լսվում, ականջաքամակային փոխատեղում արեցի:

Հիշելով, որ բաներ կան, որ ականջով չեն լսվում, բռնեցի զարկերակը, բայց...

Պատվերն էր շարունակում մնալ... Չարաբաստիկ ֆիլմի պատվերը, որն ինձ այդքան դժվարություններ նվիրեց՝ փողից բացի: Ի՞նչ անեմ: Ի՞նչ անեմ այս պատվերից ազատվելու համար: Գոնե պատվիրատուն չմեռներ, ասեի. «Էլ չէ՛... Հանուն ամբողջ աշխարհի մանչոների ժպիտների, հանուն չծնված ու ծնվող, ծնված ու ապրող մանուկների աչքերի՝ էլ չէ՛...»: Հիմա ու՞մ ասեմ այս ամենը...

**ԴԵՂԻՆ ՄԱՐԴ** - Բեզ՝ ու՞մ:

### **ՓԱՍՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ԴԵՂԻՆ ՄԱՐԴԸ**

Նրա մոր ու զուգարանի կոնքերը աղոթող ձեռքերի պես հպված էին իրար: Ցածրակարգ Ձվաբջիջը, որ ծնվել էր բարձրակարգ կնոջ հետ, ի սկզբանե աչքի էր ընկնում իր տարօրինակ, այլախոհ վարքագծով: Նա անընդհատ շտապում էր բեղմնավորվել, բայց անընդհատ հերթն իրեն չէր հասնում: Դեղին Մարդու Սպիտակ Մայրն այդ օրը որոշել էր հղիանալ վերևի հարկի հարևանի խորագետ միջնորդությամբ ու արդյունաբերական թափոններից դատարկվելով՝ մտածում էր: Բայց Վերևի Հարկի Հարևանն այդ մասին ոչինչ չգիտեր... ու, խոսքը մեր մեջ, ի՞նչ կարիք կա տղամարդուն նախօրոք տեղյակ պահել մման պարզ հարցերի լուծման մասին: Նա արդեն, խոտի դեզի շվաքում խորագետ էր գտնվել իր սեփականաշնորհած կնոջ նկատմամբ, հետո գոհաբերել նրան իր ինքնասպանված «Ախպեր ջանին» (սա չդիմացավ իր մանկության մաքուր օդի ճնշմանը ու եղանով անցքեր բացեց թոքերում, բայց էլի չդիմացավ...)

ու այժմ, քանի որ պարապ էր, իր անձնական օգտագործման քաղաքային զուգարանում հորանջում ու ժամանակավոր աշխատանք էր տրամադրում աջ կամ ձախ ձեռքին:

Ձվաբջիջը, ասես ներքին էներգետիկ կապվածությամբ, զգաց աշխատանքը, սուս ու փուս, առանց ավելորդ բացատրությունների ու հագուստի, պոկվեց ձախ կամ աջ ձվային համաստեղությունից ու ընկավ Սպիտակ Կնոջ արգանդ կամ, որ նույնն է, յոթերորդ տիեզերք: Տիեզերքը երկարաժամկետ պարապուրդի պատճառով լավ չէր աշխատում ու անկումը չզգաց: Ձվաբջջի ուզածն էլ հենց դա էր: Նա, մայրամուտի փայծաղը համբուրող զեփյուռի պես սահեց ու հասավ անդունդին: Նայեց ցած. նրա նախնիները լեռնագնացներ էին եղել, բայց բոլորն էլ արնաշաղախ գահավիժել էին ներքև՝ հազիվ մեկ լուսնային շրջան դիմանալով: Ի՞նչ անել. ընտրություն չկար: Պետք էր հասնել ուզածին՝ թեկուզ գլուխկոնծի տալով: Նա տվեց գլուխկոնծի: Եվ այն պահին, երբ Սպիտակ Մայրը որոշումն ընդունեց և ուզեց վեր կենալ, ձվաբջիջը, ջուրն ընկնող լուսնի պես, հայտնվեց ոչ այնքան բուրավետ ու հարմար լճում: Սրան անմիջապես հետևեց երկու ջրվեժ. զուգարանակոնքի որովայնինն ու Գյուտարարինը:

Ձվաբջջի համար անսովոր էր այս արագընթաց գլխապտույտը, բայց նա խուճապահար չեղավ: Նա ճանապարհին հանդիպում էր բազմադեմ Երկրների՝ իրենց տիրակալներով: Նա չխոնարհվեց ոչ մեկի առաջ ու շարունակեց վայելել իր լուսնային տարվա չափ արագությունը: Հանկարծ զգաց, որ մի սուր ու սրընթաց քրոնոսոմակուռ ստորակետ սլացքով լիզեց իր կողոսկրը:

Նա զգաց նույն էներգիան, ինչ զգացել էր հայրենիքը լքելուց առաջ:

Գյուտարարի սպերմատոզոիդը, իրոք որ, բացառիկ գյուտի բնօրինակն էր. նա, մի քանի լուսնային տարով առաջ ընկավ ձվաբջջից, կանգնեց ու ետ եկավ: Կանգնեց ձվաբջջի առաջ: Ձվաբջջի գլխապտույտն էլ կանգնեց, քանի որ սկսեց պտտվել այլ ուղղությամբ ու պատճառով: Նրանք նայեցին իրար ու չկարողացան ուրիշներին նայել: Նրանք սիրեցին իրար, քանի որ չկարողացան ուրիշներին չսիրել: Նրանք գրկվեցին, քանի որ այլ կերպ հնարավոր չէր ապրել այդ աշխարհում... այս աշխարհում...

Նրանք շարունակում էին իրենց ընթացքը՝ միասին: Մեկն առանց մյուսի՝ էլի մեկ էր, բայց կիսատ: Ու նրանցից ոչ մեկը չմնաց առանց մյուսի: Նրանք դարձան 1,00000000001 ու...

Նրանց գրկախառնության ու անընդհատ համբույրի պատկերն աստիճանաբար վերածվում էր այլ բանի: Նրանք իրենց ճանապարհին հավաքում էին աշխարհի ընդերքի բոլոր արևները:

... Այսպես ձևավորվեց ու ստեղծվեց Դեղին Մարդը՝ էրիթրոցիտների փոխարեն ունենալով... արևներ: Նա երկար ապրեց խավարի լուսավորության մեջ, շատերին կրեց իր ուսերին, որ շատերի ոտքերն ու հոգիները չկենակցեին այն կեղտի հետ, որից ինքն ազատվել էր, ինչպես նորածինը՝ իր ամենաառաջին մաշկից:

Դեղին Մարդը:

Նա եկավ պատմելու, բայց ապրեց:

(Համակարգչի էկրանի նախատիպն աչքն է,  
աչքինը՝ երկինքը, ուր խտացած են բոլոր  
տիեզերքների հիշողությունները):

Չպատմեց:

Գնաց, բայց...

*ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴԻՏԵՔ ՎԱԴԸ, ՈՐ ԺԱՄԻՆ ԵՎ  
ՈՐՏԵՂ ԿՈՒՋԵՔ*

ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ – քըստ...

**Տեսանկյան փոփոխությունից աշխարհը չի  
փոխվում:**

**Դեղին Բռունցք:**

**20010թ.**

**ՅՈԹԵՐՈՐԴ ՏԻԵՋԵՐՔ**

**ԴԵՂԻՆ ՄԱՐԴ**

**2010թ.**

**Երևան**

**ԳարՍու**

**ԳՐՎԵԼ Է ՍԵՓԱԿԱՆ ԽՂՃԻ ՊԱՏՎԵՐՈՎ**

Ո՞վ գրեց - Ես  
Ի՞նչ գրեց – Կինոպոեմ՝ արձակի համադրմամբ  
Վերնագիր - ԴԵՂԻՆ ՄԱՐԴԸ  
Ո՞վ խմբագրեց - Դիանա Համբարձումյանը  
Կազմը ձևավորեց ո՞վ - էլի ես...

Հարցերի և պատասխանների համար կարող եք գրել, եթե ունեք էլ փոստ ու ցանկություն

[garhov@gmail.com](mailto:garhov@gmail.com)  
[mard@mail.am](mailto:mard@mail.am)